1891 ՕԳՈՍՏՈՍԻ 25 (Սեպտեմբերի 6), ԿԻՐԱԿԻ

№ 23 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 23

ԿԻՐԱԿԻ, ՕԳՈՍՏՈՍԻ 25 (Սեպտեմբերի 6) 1891

Տարեկան գինն է 10 ռուբլի կէս տարուանը 6 ռուբլի:

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagank".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամէնայն օր 10—1 ժամը
(բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ թատրոնը Անդրկովկասում: Ոչխարի բրդի առևտուրը Անդրկովկասում և Պարսկաստանում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: — Առևելագէտ Վամբէրիի դէմ: Դօքտոր Հօրն և Արևլեան խնդիրը: Սանասարեան վարժարանի համբաւը: Վարդան Վարդանեան: «Թուրքաստանական առևտրական արդիւնաբերական ընկերութիւն»: Վաշխառուների դէմ: Թանկագին հիւրեր: Դպրոցական դրադարաններ: Երեխաները և ոգելից ըմպելիքները:

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ:

Արտասահմանի հայ լրագրերից:

ՖԵԼԻԵՏՕՆ: — Թէոդուլ Սաբոյի խոստովանութիւնը: Ներսէս Ե.:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ:

ԶԱՆԱԶԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Մայիս ամսին երիտասարդների մի խումբ մի մեծ յաղթանակ տարաւ:

Յաղթուածը — ինքնագոհ անշարժութիւնն էր:

Տասը տարի է ահա որ մի Հայ թատրոնական Մասնաժողով կայ Թիֆլիզում, որ իր գոյութեան մասին ամենայն տարի յիշեցնում է հասարակութեանը — բարեկենդանին մի երեկոյթ կազմելով յօգուտ թատրոնական դրամագլխի: Հասարակութիւնը յաճախում է այդ երեկոյթները և առատ դրամական տուրք է մատուցանում Մասնաժողովին:

Թէ արդեօք ինչ խորհուրդներ է յղանում այդ Մասնաժողովը, թէ ինչ ձեւով պէտք է երջանկացնէ դա Հայոց ազգը — այդ մի հանելուկ է, որ նոյն իսկ Մասնաժողովի մեծապատիւ անդամներն անկարող են լուծել:

Այնքանը միայն յայտնի է իրազեկներին (initié), որ այդ Մասնաժողովը դրամ է ժողովում, որպէսզի մի կլուբ բանայ մեծահնչիւն «ակումբ» անունով և այդ կլուբին է յանձնուած ապահովել հայ թատրոնական խմբի գոյութիւնը:

Թէև կլուբներն այն ձեւով ինչպէս նրանք իրագործուել են մեր մէջ լոկ թղթախաղի ասպարէզ են, բայց և այնպէս այս դէպքում գուցէ ներելի համարուի հետևել յայտնի ճիզուիթական կանոնին, թէ «նպատակը արդարացնում է միջոցները»:

Յոռետեսներն աչքի առաջ ունենալով, որ կլուբների թիւը Թիֆլիզում շատ մեծ է և սպառնում է եկեղեցիների թուից իսկ անցնել, այն կարծիքն են յայտնում թէ հաւանական է որ թատրոնը միջոց դառնայ կլուբի ձեռքում և ոչ թէ կլուբը թատրոնի. բայց որովհետև մէկ կողմից մեր հասարակութեան մէջ բաղդաւորապէս լաւատեսների թիւն աւելի մեծ է, իսկ միւս կողմից մեր ազգն է ստեղծել այն առածը, թէ «Համբերութիւնը կեանք է», ուստի ինքնագոհ անշարժութեան հերոսները կարող են անվրդով շարունակել իրենց քունը, երազում զբօսնելով կլուբի a giorno լուսաւորուած դահլիճներում:

Սակայն յայտնի է, որ համբերութիւնն էլ իր սահմաններն ունի և որ բոլոր ազգերի մէջ երիտասարդութիւնն իրաւամբ վայելում է անհամբեր ածականը:

Արդ անհամբեր երիտասարդութիւնը քաջ գիտենալով թէ որպիսի մեծ նշանակութիւն ունի թատրոնը և տեսնելով թէ ուրիշ ազգութիւնները Թիֆլիզում կանոնաւոր ներկայացումներ ունին կազմակերպած, բնականապէս սկսեց ձգտել իրագործելու հայ «թատրոնական գաղափարը» մեր քաղաքում, այն համոզմամբ ոգևորուած որ մի վերին աստիճանի կարևոր ծառայութիւն մատուցած կլինի ազգին:

Նախաձեռնութեան պատիւն այս գործում պատկանում է իրաւաբան պ. Կարապետ Եղաբեանին և մի քանի երիտասարդների: Սրանց նպատակն էր քաղցր քնից արթնացնել Մասնաժողովին, թելադրել նորան որ օր առաջ սկսէ ներկայացումների շարքը Թիֆլիզում:

Այս առաջամարտիկ խմբի ջանքերը, որոնք, պէտք է նկատենք, կրում էին կատարեալ յարգանքի դրոշմ դէպի անցեալ գործիչները, ի զերև անցան:

Բայց արծարծուած միտքը բազմաթիւ հետևողների խորհրդակցութեան առարկայ դարձաւ և երիտասարդների մի այլ խմբի յաջողուեց մայիս ամսին թատերասէրների մի ընդհանուր ժողով կազմել, ուր բաղդի բերմամբ կանաչ մահուդով ծածկած սեղանի շուրջը բազմած էին հռչակաւոր Մասնաժողովի անդամները:

Այդտեղ «թատրոնական գաղափարի» անցեալ և ապագայ գործիչների մէջ մի հետաքրքրական և վճռողական տուրնիր տեղի ունեցաւ:

Գործ դրած զէնքը — խօսքն էր:

Երիտասարդութիւն. Ամէն կերպ ցանկալի է, որ Թիֆլիզում հայ թատրոն գոյութիւն ունենայ:

Մասնաժողով. Ցանկալի է:

Երիտ. Մեծ ամօթ է հայերիս համար, որ մինչդեռ մեզանից աւելի փոքրաթիւ ազգութիւնները բեմ ունին Թիֆլիզում, մենք զուրկ ենք հասարակութեան այդ կրթիչ միջոցից:

Մասնաժ. Ամօթ է:

Երիտ. Դուք թատրոնի համար յատուկ ժողոված դրամ ունիք:

Մասնաժ. Ունինք:

Երիտ. Որքա՞ն:

Մասնաժ. Այս րոպէիս դժուարանում ենք ճիշդ թուանշանն ասել:

Գ. Սունդուկեանց. Բացի Մասնաժողովի ձեռքում ունեցած փողից, կայ և իմ նուիրած 820 ռուբլի գումարը. . .

Երիտ. Այսպէս թէ այնպէս այն դրամը, որ դուք ունիք աւելի քան բաւական է, որպէսզի մի օրինաւոր խումբ կազմակերպուի և գործն սկսուի:

Մասնաժ. Այո, բաւական է:

Երիտ. Դէհ ուրեմն, օ՛ն անդր առաջ:

Մասնաժ. Ո՛չ, այդ դրամը բաւական չէ մեր ցանկացած ակումբ — կլուբը բանալու, որի նպատակն է ապահովել կանոնաւոր ներկայացումները:

Երիտ. (անհամբերութեամբ:) Չէ՞ կարող Մասնաժողովը մեզ ասել, թէ արդեօք XIX-դ դարում կ'իրագործուի ակումբը թէ՞ XX-դ:

Մասնաժ. (սառնութեամբ:) Դժուար է ասել, բայց հաւանական է որ XIX-դ դարում պատահի այդ:

Երիտ. (դառնալով դէպի մասնագէտ հանդիսականները:) Որքա՞ն փող է հարկաւոր երկու տարով թատրոնն ապահովելու:

Մասնագէտներ. 2500 ռուբլի:

Երիտ. Մենք կըհանգանակենք այդ գումարը:

Եւ արդարև կարճ միջոցում, ամէն տեսակ խոչնդոտների յաղթելով, նրանք ժողովեցին յիշեալ գումարը, թատրոնի ղեկն իրենց ձեռքն առան, կազմեցին մի բաւականին յաջող խումբ Պոլսից ույժեր հրաւիրելով և հասարակութիւնը սեպտեմբերից կըվայելէ հայկական ներկայացումներ:

Այո, սա մի յաղթութիւն էր, որին պէտք է համակրէ մայրենի լեզուի զարգացման նախանձախնդիր ամէն մի հայ:

Սակայն նոր մասնաժողովը իրաւունք չունի դափնիների վրայ հանգչել. նա պէտք է օգտուի նախընթաց մասնաժողովի փորձից, պէտք է անդադար աշխատէ գործին նպատակայարմար կազմակերպութիւն տալու, պէտք է իր դէմ լարած ներքին և արտաքին խարդաւանքների դէմ առանց երբէք վհատելու մաքառէ, պէտք է անշարժութեան փոխարէն կեանքի զօրեղ նշաններ արտայայտէ:

Մամուլի պարտաւորութիւնն է աջակից լինել թատրոնական մասնաժողովին, սիրով հետևել նրա գործունէութեան, մատնանիշ անել այն միջոցների վրայ, որոնք կարող են նպաստել գործի ցանկալի յաջողութեանը:

ՈՉԽԱՐԻ ԲՐԴԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Անգլիական կառավարութիւնը նորերումս յանձնել էր պ. Լօու՛ին, որ առևտրական ագէնտի պաշտօն է վարում Պետերբուրգի անգլիական դեսպանատանը, մանրամասնօրէն հետազօտել ոչխարի բրդի առևտրի դրութիւնը Անդրկովկասում և Պարսկաստանում: Պ. Լօու ներկայացրել է իր հաշիւը, որ պարունակում է հետևեալ հետաքրքրական տեղեկութիւնները:

Այս երկրներում բրդի առևտուրը ամբողջապէս հայերի ձեռքումն է. մի անգլիական վաճառատուն միայն, որի գործակալը դարձեալ հայ է, ժամանակ առ ժամանակ բուրդ է առնում Խորասանի նահանգում. այս բացառութեամբ բոլոր բուրդը հայերն ուղարկում են Բաքու և Թիֆլիզ: Թէև հայերը պատրաստ են տեղնուտեղը ծախել բուրդը, բայց սովորաբար նախադասում են ապրանքն ուղարկել իրենց գործակալներին արտասահման, մանաւանդ Մարսէլ: Այս գործակալներից մի քանիսը արտագրում էին բուրդը մինչև անգամ Նիւ-Եօրկ և ինչպէս լսւում է այս առևտրական գործառնութիւնները յաջողութիւն են գտել:

Վերջին ժամանակները Թիֆլիզի շուկայում լոյս են ընկել ռուս-լեհական բրդի գործարանատէրերի գործակալներ: Աչքի առաջ ունենալով ռուսաց մաքսային բարձր հարկերը, սրանք օտար մրցումից երկիւղ չունին

ՖԵԼԻԵՏՕՆ

ԹԷՈԴՈՒԼ ՍԱԲՈՅԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

ՎԷՊԻԿ

(Գիւի դը Մոպասանից)

Սաբոն Մարտէնվիլլի պանդոկը մտնելիս ամենքն առաջուց արդէն սկսում էին ծիծաղել: Այդ թշուառական Սաբոն խեղկատակ էր արդեօք: Ո՛չ քեզ մէկը, որ քահանաներին չէր սիրում, ամենևին, ամենևին աչքով աչք չունէր նրանց հետ. կուտէր նրանց այդ անպիտանը:

Սաբոն (Թէոդուլը) հիւսնութեան վարպետ էր և Մարտէնվիլլի յառաջադիմական կուսակցութեան ներկայացուցիչը: Սա մի երկար ու բարակ մարդ էր, գորշ և խորամանկ աչքերով, քունքերի վրայ թափթփած մազերով և փոքրիկ բերանով: Երբ նա մի առանձին եղանակով ասում էր. «Տէր ողորմեա հայր մերը», ամենքի ծիծաղն էլ բռնում էր:

Նա դիտմամբ չէր մոռանում կիւրակի օրերը պատարագի ժամանակ աշխատել: Ամէն տարի մեծ պասի երկուշաբթի օրը խոզ էր մորթում, որպէսզի մինչև Զատիկ երշիկ ունենայ, և երբ քահանան նրա առջևից անցնում էր, սա միշտ ծիծաղելով ասում էր. «ա՛յ քեզ մէկը, որ իր արարիչ Աստծուն կուլ է տուել»:

Քահանան, որ մի հաստ, բայց նոյնպէս երկար մարդ էր, վախենում էր նրանից իր ծաղրաբանութիւնների պատճառով, որով նա իրեն կուսակիցներ էր շահում: Աբբա Մարիտիմը մի քաղաքագէտ մարդ էր, որ սիրում էր ճարպիկ միջոցներ: Տասը տարի էր որ կռիւը շարունակվում էր նրանց մէջ, այդ մի գաղտնի, կատաղի և անընդհատ կռիւ էր: Սաբոն գիւղական խորհրդարանի անդամ էր: Կարծում էին, որ նա գիւղապետ կըդառնայ, որով եկեղեցու պարտութիւնը վերջնական կըլինէր:

Ընտրութիւնները տեղի պիտի ունենային շուտով: Կղերական կուսակցութեան բանակը Մարտէնվիլլում դողում էր: Յանկարծ մի առաւօտ քահանան ուղևորուեց Ռուան, յայտնելով իր աղախնին, որ գնում է առաջնորդի մօտ:

Երկու օրից յետոյ նա վերադարձաւ: Նա ուրախ էր և յաղթական կերպարանք ունէր: Ամէնքը յաջորդ օրն իմացան, որ եկեղեցու դասը պիտի վերանորոգուէր: Սրբազան առաջնորդը իր սեպհական գանձարանից 600 ֆրանկ էր նշանակել այդ նպատակի համար:

Եկեղեցու դասի բոլոր եղևնեայ նստարանները պիտի քանդուէին և նորը պէտք է շինուէր կաղնէ փայտից:

Այդ մի նշանաւոր հիւսնի աշխատանք էր, որի մասին նոյն իրիկունն իսկ բոլոր տներում խօսում էին:

Թէոդուլ Սաբոն այլևս չէր ծիծաղում: Երբ յաջորդ օրը նա գիւղով անցնում էր, բարեկամ թէ թշնամի ամենքն էլ հարցնում էին ծաղրելով.

— Դու պէտք է շինես եկեղեցու դասը չէ՞:

Նա պատասխան չէր գտնում տալու, բայց կատաղում էր, խիստ էր կատաղում:

Չարամիտներն աւելացնում էին.

—Այդ մի լաւ գործ է. անպատճառ երկու կամ երեք հարիւր օգուտ կարող է տալ: Երկու օրից յետոյ յայտնի էր արդէն, որ նորոգութիւնը պիտի յանձնուէր Ցելեստին Շամբրլանին, Պարշէվիլլի կահագործին: Յետոյ հերքեցին այդ լուրը. այնուհետև յայտարարեցին, որ եկեղեցու բոլոր նստարաններն էլ պէտք է նորոգուէին: Այդ արդէն երկու հազար ֆրանկ կընստէր, որ խնդրել էին նախարարութիւնից: Վրդովմունքը շատ մեծ էր: Թէոդուլ Սաբոյի քունն էլ չէր տանում: Երբէք, քանի մարդկային յիշողութիւնը հասնում էր, մի գիւղական կահագործ այդպիսի մի գործ չէր կատարել: Սրանից յետոյ մի շշունջ ընթացաւ: Բոլորովին ծածուկ խօսում էին, որ քահանան վշտացած էր այդ գործը տալու մի մարդու, որ իր ծխականը չէր, սակայն ինչ պիտի անէր, քանի որ Սաբոյի կարծիքներն արգելում էին նրան յանձնելու այդ գործը:

Սաբոն այդ իմացաւ: Գիշերը վրայ հասնելուն պէս նա դիմեց դէպի երեցատունը: Աղախինը նրան պատասխանեց որ երէցը եկեղեցումն է: Նա մտաւ եկեղեցի:

Երկու պառաւած և թթու դրած օրիորդ զարդարում էին սեղանը Աստուածածնի ամսուան համար քահանայի հսկողութեան ներքոյ: Քահանան կանգնած դասի մէջտեղը, ահագին փորն ուռցրած կառավարում էր երկու կանանց գործը, որոնք աթոռների վրայ բարձրացած սրբութիւն սրբութեանց շուրջը փնջերով զարդարում էին:

Սաբոն եկեղեցու մէջ իրեն այնպէս անհանգիստ զգաց, իբրև թէ իր ամենամեծ թշնամու մօտ էր գտնվում, բայց վաստակի ցանկութիւնն այնքան մեծ էր, որ նրա սիրտը բաբախում էր: Նա մօտեցաւ գլխարկը ձեռին առանց ամենևին օրիորդների վրայ ուշք դարձնելու, որոնք ապշած նստած մնացին: Նա թոթովեց:

—Բարև, տէր հայր:

Քահանան պատասխանեց առանց նրա վրայ նայելու և բոլորովին իր սեղանով զբաղուած:

—Բարև, պարոն կահագործ:

Սաբոն շուարած այլևս բառ չէր գտնում, սակայն մի վայրկեան լռութիւնից յետոյ ասաց.

—Պատրաստութիւններ էք տեսնում:

Աբբա Մարիտիմը պատասխանեց.

—Այո, շուտով Աստուածածնայ ամիսն է լինելու:

Սաբոն էլ արտասանեց. «Այո, այո», յետոյ լռեց:

Այժմ նա ցանկանում էր առանց մի բան ասելու յետ քաշուել, հեռանալ, բայց երբ մի ակնարկ ձգեց եկեղեցու դասին, ինքն իրեն զսպեց: Նա նկատեց 16 նստարան, որ պիտի նորոգուէր, — վեցն աջ կողմում, ութը ձախ, իսկ խորանի դռանը դարձեալ երկուսը: Տասնվեց եղևնի նստարան. այդ արժէր գոնէ երեք հարիւր ֆրանկից աւելի, և այդ սիրուն զարդարելով՝ անշուշտ կարող էր մէկը 200 ֆրանկ վաստակել, եթէ խելքը գլխին մարդ էր:

Այն ժամանակ նա արագութեամբ ասաց.

—Ես գործի եմ եկել:

Քահանան զարմացած ձևացաւ և հարցրեց.

—Ի՞նչ գործի:

Սաբոն փնթփնթաց.

—Հիւսնութեան գործի:

Այն ժամանակ քահանան դարձաւ դէպի նրան և նայեց նրա աչքերին.

—Մի՞թէ դուք իմ եկեղեցու վերանորոգութեան մասին էք խօսում:

Այն եղանակով, որով աբբա Մարիտիմը խօսել սկսաւ, Թէոդուլ Սաբոյի մարմնու մէջ դող ձգեց, և նա սաստիկ ցանկութիւն զգաց յետ քաշուելու. սակայն պատասխանեց խոնարհութեամբ.

—Այո, տէր հայր:

Այն ժամանակ քահանան ծալեց իր ձեռները և դրաւ լայն որովայնի վրայ, և ապուշ կտրած կրկնեց.

—Այդ դուք էք, դուք... դուք... Սաբոն... որ եկել էք ինձնից այդ խնդրելու... դո՞ւք... միակ անաստուածը իմ ծխի... բայց այդ մի հասարակական գայթակղութիւն կըլինի: Սրբազանն ինձ կըյանդիմանէ, կարելի է տեղիցս էլ զրկի:

Քանի մի վայրկեան շունչ առաւ նա, ապա մի աւելի մեղմ եղանակով աւելացրեց.

—Ես հասկանում եմ, որ ձեզ համար ծանր է տեսնել, որ այդպիսի մի նշանաւոր գործ յանձնուի հարևան ծխի կահագործին: Բայց ես այլ կերպ անել կարող չեմ, եթէ գոնէ... բայց ոչ... այդ անհնարին է... Դուք դրան չէք համաձայնիլ երբէք, և առանց դրան, երբէք:

Սաբոն այժմ նայում էր աթոռների շարքին, որոնք ձգվում էին մինչև եկեղեցու դուռը: Հապա եթէ այս բոլորն էլ փոխելու լինին:

Նա հարցրեց.

—Ի՞նչ է պէտք ձեզ, ասացէք խնդրեմ:

Քահանան հաստատ ձայնով ասաց.

—Ինձ պէտք է մի յայտնի առհաւատչեայ ձեր դարձի:

Սաբոն փնթփնթաց.

—Ես չեմ մերժում, ես չեմ մերժում, թերևս համաձայնենք:

Քահանան յայտնեց.

—Պէտք է հաղորդուիք հրապարակապէս առաջիկայ կիւրակի օրը պատարագին: Կահագործը գոյնը նետեց և առանց պատասխանելու հարցրեց.

—Իսկ նստարանները, դրանք էլ պէտք է նորոգուին:

Աբբան պատասխանեց վստահութեամբ.

—Այո, բայց աւելի ուշ:

Սաբոն կրկնեց.

—Ես չեմ մերժում, ես չեմ մերժում: Ես անդարձ չեմ, ես համակրում եմ կրօնին. անպատճառ, ինձ խրտնեցնում է սովորութիւնը, այսպիսի դիպուածում ես անդարձ չեմ լինիլ:

Սուրբ կուսին նուիրուած կուսանք իջել էին իրենց աթոռներից և ծածկուել սեղանի ետևը, նրանք ականջ էին դընում վրդովմունքից գունաթափուած:

Քահանան տեսնելով իր յաղթութիւնը, անմիջապէս քէֆը բացուեց, և բարեկամաբար յարակեց.

—Շատ սիրուն, շատ սիրուն: Այ մի խելօք խօսք, ամենևին անմիտ էլ չէ, սպասեցէք. ա՛յ կըտեսնէք, ա՛յ կըտեսնէք:

Սաբոն ժպտում էր քաշուելով, նա հարցրեց.

—Չի՞ կարելի այդ հաղորդութիւնը մի փոքր յետաձգել:

Բայց քահանան իր նախկին լուրջ կերպարանքն առնելով՝ ասաց.

—Այն վայրկեանից, երբ այս գործը ձեզ յանձնուած կըլինի, ես կամենում եմ ապահով լինել, որ դուք արդէն հաւատի էք դարձած: Յետոյ նա շարունակեց աւելի քաղցր եղանակով.

—Դուք վաղը կըգաք խոստովանելու, որովհետև պէտք է, որ ես ձեզ քննեմ գոնէ առ սակաւն երկու անգամ:

Սաբոն կրկնեց.

—Երկու անգա՞մ...

—Այո:

Քահանան ժպտում էր.

Դուք հասկանում էք, որ ձեզ պէտք է մի ընդհանրական քաւութիւն, մի կատարեալ լուացումն: Ուրեմն եկ ձեզ կըսպասեմ վաղը:

Կահագործն ինքն իրեն կորցրած հարցրեց.

—Ո՞ւր էք անում դուք այդ:

—Հարկաւ... խորանում:

—Այդ... արկղի մէջ, որ այն անկեանն է: Այն է որ... այն է որ... ես չեմ հաւանում ձեր այդ արկղը:

—Ինչո՞ւ:

—Այն պատճառով որ... այն պատճառով որ ես սովոր չեմ դրան: Մանաւանդ որ իմ այս ականջս մի փոքր ծանր է:

Քահանան զիջող դարձաւ.

—Դէհ ուրեմն, դուք ինձ մօտ կըգաք, իմ դահլիճս: Մենք այդ կանենք երկուսով. գլուխ գլխի տուած: Սրան հաւանում էք:

—Այո, դրան համաձայն եմ, բայց ձեր արկղին՝ ոչ:

—Օ՛ն ուրեմն, ցվաղն, օրուան աշխատանքից յետոյ, վեց ժամին:

—Համաձայն եմ, ամէն ինչ նախատեսուած, պայմանաւորուած է, ցվաղն, տէր հայր: Անիծեալ լինի ով յետ կանգնի:

Նա մեկնեց իր կոշտ ու երկար ձեռքը, որին քահանան շրխփացնելով խփեց իւրը:

Ճրխկոցի ձայնն անցաւ բոլոր կամարների տակով և գնաց խլացաւ դաշնակի խողովակների յետևը:

—

Միւս օրն ամբողջ՝ Թէոդուլ Սաբոն անհանգիստ էր: Նա այնպիսի զգացումն ունէր, ինչպիսին մարդս ունենում է՝ երբ պէտք է մի ատամ հանել տայ: Ամէն վայրկեան միտն էր ընկնում. «ես այսօր պիտի խոստովանուեմ»: Եւ նրա վրդովուած հոգին, անաստուած մարդու մի չընկճուած հոգին, շուարում էր աստուածային խորհրդի անորոշ և զօրաւոր երկիւղի առաջ:

Նա իր աշխատանքը վերջացնելուն պէս դիմեց երեցատան կողմը:

Քահանան նրան սպասում էր պարտիզում աղօթագիրքը կարդալով և ճեմելով մի փոքրիկ ուղու երկարութեամբ: Նա զուարթերես էր և առաջ եկաւ բարձր ծիծաղով.

—Դէհ, այս էլ մենք: Մտէք, մտէք պարոն Սաբոյ, ձեզ չեն ուտիլ:

Եւ Սաբոն առաջ ներս մտաւ. Նա շշնջեց.

—Եթէ ձեզ յարմար է, վերջացնենք մեր փոքրիկ գործը:

և կարող են աւելի մեծ գներ հատուցանել բրդի համար և բուրդը նրանց դարձեալ աւելի աժան է նրստում քան թէ Եւրոպայում և Ամերիկայում:

Սակայն պէտք է նկատենք, որ Թիֆլիզ են յաճախում նոյնպէս ֆրանսիացի commis-voyageurs'ներ բուրդ առնելու նպատակով. բայց որովհետև նրանք ռուս-լեհական գործակալների չափ ծանօթ չեն տեղական առևտրի պայմաններին, ուստի և նրանց օգուտը շատ չնչին է:

Բուրդը բերվում է Կասպից ծովի շոգենաւերով և ապա ուղարկվում Սև ծովի նաւահանգիստները:

Խորասանի բրդի շուկայի նկատմամբ պ. Լօու նկատում է որ ոչխարները կազմում են այն ցեղերի սեփականութիւն, որոնք թափառում են երկրի ամեն բլրոտ մասերում մինչև Աւղանստանի սահմանները, ուր իբրև կենդրոն ծառայում է Տուրբաթի ձորակը:

Ոչխարներին խուզում են մարտ և օգոստոս ամիսներին, իսկ առևտրական գործառնութիւնների կենդրոնը Սաբզեվարն է, ուր և հաստատվում են հայ վաճառականները: Խուզելու տեղը նրանք ուղարկում են իրենց հաւատարմութիւնը վայելող պարսիկներին, նրանց փող տալով բուրդն առնելու համար, որ կարող է պարունակել իւր մէջ ոչ աւելի քան 1—2% սևագոյն բուրդ: Ապրանքը բերվում է Սաբզեվար, ուր հայերն ընդունում են շուկայի գնով, իսկ պարսիկներն 2% յանձնարարական են տալիս: Ապա բուրդը տեսակների և հակերի է բաժանվում, երկ-երկու հակ, որոնցից իւրաքանչիւրը մօտ 1,900 ֆունտ ծանրութիւն ունի՝ բարձվում ուղտերի վրայ և ուղարկվում Բենդիր և Գեզ—Կասպից ծովի ափերին, այնտեղից աւելի հեռու տանելու համար:

Ամեն տարի Սաբզեվարից մօտ 1,012,000 հակ բուրդ է ուղարկվում, որ անցեալ օգոստոսին (1888) թուին արժէր այնտեղ 33 թուման իւրաքանչիւր գալքան կամ անգլիական «սա» ֆունտը 4 պէնս. բայց երբ որ խոտն առատ է, բուրդն աւելի աժան է:

Անդրկովկասեան բրդի վերաբերութեամբ պ. Լօու զեկուցանում է որ 11,900,000 ոչխարներից, գլխաւորապէս դմակաւոր, գոյանում է 150,000 փութ բուրդ, որոնցից 80 հազար փութ արտահանվում են Եւրոպա: Պ. Լօուն ենթադրում է սակայն, որ այս թուերը պէտք է իրականներից պակաս համարել:

Ինչ որ արտադրութեան ծախսերին է վերաբերում, այս գինը Խորասանից Բաթում վեց պէնս աժան է, քան Խորասանից Բենդեր-Աբաս. ուրեմն պէտք է առանձին պատճառներ լինին, որոնք թելադրում են վերջին ճանապարհը նախադասելու:

Անդրկասպեան երկաթուղու շինութիւնը, պ. Լօուի ասելով, աժանացրեց Բուխարայի և Թուրքեստանի բրդի արտահանութիւնը դէպի Կասպից ծովը, ինչպէս Բաքու-Թիֆլիզեան երկաթուղին—դէպի Սև ծովի նաւահանգիստները:

Անգլիական կառավարութեան այն հարցին, թէ արդեօք կարելի չէ՞ր լինիլ ասիական բրդի մեծագոյն մասը ուղղել Անգլիա և բուրդը ձեռք բերել անգլիացոց ձեռքով տեղն ու տեղը, պ. Լօուն զեկուցանում է, որ այդ հազիւ թէ իրագործելի լինի, որովհետև անգլիացիք հայերի չափ ծանօթ չեն երկրին, լեզուին և բնիկների տեղական պայմաններին: Սորանով կարելի է բացատրել որ անյաջող եղան ֆրանսիացոց և գերմանացոց փորձերը մեծ քանակութեամբ տեղում բուրդ առնել:

Անշուշտ հայերի համար ձեռնտու կլինէր որ անգլիայի վաճառականները նրանցից նոյն իսկ Խորասանում բուրդն առնէին, որովհետև այս դէպքում նրանք կարող կլինէին դրամի հատուցման կողմից գործ ունենալ Լոնդոնի հետ փոխանակ Պետերբուրգի և այսպիսով ազատ մնալ այն կորուստներից, որ պատճառում է ռուսաց դրամի յաճախակի տատանումը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր հայրենակից երիտասարդ մեկը, որ այժմ Գերմանիա է գտնվում, մի ընդարձակ յօդուած է նուիրել հայոց ներկայ վիճակին «Deutscher Wochenblatt» թերթին, որի մէջ նա քաջապէս հերքում է հունգարացի նշանաւոր ճանապարհորդ և արևելագէտ Վամբերիի թիւր կարծիքները հայոց վերաբերութեամբ: Այդ ընդարձակ և գեղեցիկ գրուած պաշտպանողական յօդուածը պատիւ է բերում մեր երիտասարդ զինակցին, որ P. H. է ստորագրում:

⁂

Արտասահմանի մի հայ թերթ՝ Գերմանիայի թղթակիցը գրում է. «Շտրասբուրգի համալսարանի այս ամառուայ կիսամեակի դասախօսութիւնների ցուցակում նկատւում էր ի միջի այլոց և [illegible] խնդիր, որ դասախօսելու էր ուսուցիչ (դոցենտ) դօքտոր Հօրն: Մեզ յայտնի չէ թէ արդեօք համալսարանի բեմից այս խնդիրը երբէք դասախօսուել է, բայց այսքան գիտէի որ այստեղ անշուշտ պէտք է հայոց մասին էլ խօսուէր և այդ ի հարկէ առաջին անգամ:

Խնդիրն ինքն ըստ ինքեան շատ հետաքրքրական է և առաւել որ առիթ կար տեղեկանալու մի գիտնականի և համալսարանի ուսուցչի համոզմունքին, որ պիտի ծաղէր խնդիրը սառն և անկողմնակալ կերպով ուսումնասիրելուց: Ուսուցիչ դօքտոր Հօրնը քաջ թիւրքերէն գիտէ և դասախօսում է այդ լեզուն, և այժմ էլ եռանդով պարապում է հայերէնով: Ճանաչում է արևելցիներին բաւական և ծանօթ է արևելեան խնդրի բոլոր աղբիւրներին»:

⁂

Սանասարեան վարժարանը իրաւամբ այնպիսի հռչակ է սկսում վայելել, որ նոյն իսկ հեռաւոր տեղերից աշակերտներ են յանձնվում այդ հաստատութեանը: Այսպէս Միացեալ—Նահանգների Ուստր քաղաքից, ինչպէս գրում են «Հայրենիքին», վաճառական Գէորգ էֆէնդի Թօրոսեանը «Կարին խրկեց շաբաթ օր Սանասարեան վարժարանի մէջ կրթութիւն ստանալու համար իր երկու զաւակներն և որդեգիր մը»:

⁂

Նորերումս քիմիայի դօքտորի գիտնական աստիճանին է արժանացել պ. Վարդան Վարդանեանը (այն Վարդանեանի թոռը, որ Ախալցխայում մի եկեղեցի և մի ուսումնարան է կառուցել), ներկայացնելով Բեռնի համալսարանին մի աշխատութիւն, որ կրում է «Cordensation von m—Nitrobenzsldehyd mit chinaldin» վերնագիրը: Այս հետազօտութիւնը նա կատարել է Միւնխէնի բարձրագոյն տեխնօլօգիքական ուսումնարանի քիմիական գործանոցում (laboratorium):

⁂

Ռուսաց պաշտօնական թերթերում հրատարակուած է «ռուս-պարսկական առևտրական—արդիւնաբերական ընկերութեան» բարձրագոյն հաստատուած կանոնագրութիւնը: Ընկերութեան նպատակը ձևակերպուած է կանոնագրութեան առաջին յօդուածում՝ հետևեալ կերպով «Ռուսաստանի և Պարսկաստանի միջև առևտուրը զարգացնելու համար, զանազան գործարաններ հիմնելու և ապրանքների պահեստներ կազմելու համար հիմնվում է բաժանորդագրական ընկերութիւն «ռուս-պարսկական առևտրական—արդիւնաբերական ընկերութիւն» անունով:

Ընկերութեան հիմնադրամը մէկ միլիօն երկու հարիւր յիսուն հազար ռուբլի է:

⁂

Յայտնի է այն տխուր փաստը, որ վաշխառութիւնն օրէցօր աճում է թէ քաղաքներում և թէ գիւղերում մեծապէս վնասելով տնտեսական կեանքին: Այժմ, մայրաքաղաքի թերթերի ասելով, ներքին գործոց և արդարութեան նախարարները փոխադարձ համաձայնութեամբ մի օրէնքի ծրագիր են մշակել վաշխառուներին պատժի ենթարկելու նպատակով: Այս նախագծի համեմատ այն անձինքների դէմ, որոնք մեծ տոկոսիքով փող են տալիս պէտք է գործէ թէ դատաստանը և թէ վարչութիւնը: Վարչութիւնը իրաւունք է ստանում վաշխառուներին արտաքսել իրենց բնակութեան տեղից և ոստիկանութեան հսկողութեան ենթարկել երեք տարի ժամանակով: Եթէ դրամ է փոխ տուած այնպիսի պայմաններով, որոնք, ինչպէս վաշխառուին յայտնի կարող էր լինէր, չափազանց ծանր են պարտապանի համար, մեղաւորը բանտարկվում է մինչև մի տարի և չորս ամիս ժամանակով: Եթէ մեղադրեալը տոկոսիքը աւելացրել է մայր գումարին տոկոսիքի մեծութիւնը քողարկելու նպատակով, նա բանտարկվում է մինչև մի տարի և վեց ամիս ժամանակով: Չափազանց չէ համարուած միայն այն տոկոսիքը, որ չէ անցնում փոխ տուած գումարի տասերորդ մասից մի տարում: Բոլոր դէպքերում երբ դատաստանով ապացուցուած կլինի վաշխառութիւնը, պարտատէրն իրաւունք ունի միմիայն մայր գումարը հետ ստանալու և գրկվում է որևէ տոկոսիքից:

⁂

Ամսոյս 19-ին, երեկոյեան Բաթումի գնացքով Թիֆլիզ հասան Կ. Պօլսից հրաւիրուած յայտնի դերասանուհի տիկ. Սիրանոյշը և դերասան պ. Թուրեանը, թատրոնական յանձնաժողովի կողմից Կ. Պօլիս ուղևորկուած պ. Պետրոսեանի հետ: Թանկագին հիւրերին ընդունելու համար Թիֆլիզի կայարանում այդ երեկոյ ներկայ էին թատրոնական յանձնաժողովի անդամները, տեղական դերասանական խումբը և մի խումբ երիտասարդներ: Դերասաններից մի քանիսը դիմաւորելու գնացել էին մինչև «Մցխեթ» կայարանը: Թիֆլիզի կայարանի պահլիճում ընդունելով թանկագին հիւրերին, յանձնաժողովի կողմից պ. Շիրվանզադէ մի քանի ջերմ խօսքերով ողջունեց նրանց գալուստը, ներկայացնելով տիկ. Սիրանոյշին թարմ ծաղիկներից մի գեղեցիկ փունջ: Այնուհետև յանձնաժողովի անդամների առաջնորդութեամբ թանկագին հիւրերը ուղևորուեցին դէպի իրանց համար յատկապէս պատրաստուած կացարանը:

Կ. Պօլսից հրաւիրուած միւս ոյժերը կըգան մօտաւորապէս մի շաբաթից յետոյ: Սպասվում են տիկին և պարոն Պեննեմէջեանները, նոյնպէս և մի նոր երիտասարդ դրամատիքական ոյժ: Բացի դրանից յանձնաժողովը մտադիր է սեզոնի ընթացքում հրաւիրել Թիֆլիզի հասարակութեանը քաջ յայտնի համակրելի դերասանուհի Վերգինիա Գարակաշեանին:

⁂

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Հարուստ և բարեկարգ գրադարանները դպրոցների անհրաժեշտ մասն են կազմում. եթէ որևէ դպրոցում գրադարանը ճոխ է և պատշաճաւոր ղեկավար ունի, նա նոյնքան օգուտ կարող է տալ, որքան և դասաւանդութիւնը:

Ինչպէս դպրոցները, նոյնպէս և գրադարանները նոր են մեզ համար. մեր դպրոցներից տասնից մէկը հազիւ գրադարան ասուած բանն ունենայ և այն էլ ինչպէս ողորմելի վիճակի մէջ: Եթէ ժողովրդական դըպրոցներն անձեռնհաս են լաւ գրադարաններ ունենալու բազմադիմի պատճառներով, գոնէ մեր թեմական դպրանոցները պէտք է անշուշտ քիչ շատ բարեկարգ գրադարաններ ունենան: Սակայն մեր դպրանոցներից ո՞րը մի օրինաւոր գրատուն ունի: Իրաւ է Ս. Էջմիածնի ճեմարանի գրատունը հարուստ է բաւական, բայց նա էլ նման է ամեն մի բարեգործութեան հաստատած գրատան. Նուէրներով միայն գրատուն չէ կարելի կազմել, գրատունը պէտք է իւր տարեկան ծախքի գումարն ունենայ, որ ընթացիկ կարողանայ լինել: Ճեմարանի գրատունը եթէ հարստութեան կողմից համեմատաբար նախանձելի վիճակի մէջ է, բայց ոչ բարեկարգութեան կողմից:

Մեր թեմական դպրոցներից անդրանիկը—Ներսիսեան դպրանոցն իբրև երեք քառորդ դար գոյութիւն ունեցող դպրոց այսօր պէտք է առաջ-

---

Քահանան պատասխանեց.

—Պատրաստ եմ ձեզ ծառայելու: Իմ փիլոնս այնտեղ է: Մի վայրկեանից ես պատրաստ եմ ձեզ լսելու:

Հիւսնը երբ քահանային փիլոնով տեսաւ յուզուեց այնպէս, որ գլխում խելք չմնաց: Քահանան նրան նշան արաւ.

—Չոքեցէք այս բարձի վրայ:

Սաբոն մնաց կանգնած, ամաչելով չոքել. Նա շշնջեց.

—Այդ շա՞տ օգտակար է:

Բայց աբբան վեհ կերպարանք էր ըստացել.

—Ապաշխարութեան դատարանին կարելի է միայն ծնգաչոք մերձենալ:

Եւ Սաբոն չոքեց:

Քահանան ասաց.

—«Խոստովանիմ» ասացէք:

—Ի՞նչ բան:

—Խոստովանիմ: Եթէ դուք այդ չգիտէք այլևս, կրկնեցէք իմ ասած խօսքերը մի առ մի: Քահանան արտասանեց աղօթքը ծանր եղանակով և շեշտելով այն բառերը, որ հիւսնը կրկնում էր. յետոյ նա յարեց.

—Այժմ խոստովանեցէք:

Բայց Սաբոն այլևս բան չէր ասում, չգիտենալով ինչ տեղից սկսէ:

Այն ժամանակ աբբա Մարտիմը նըրան օգնութեան հասաւ.

—Որդեակ, ես ձեզ հարցուփորձ կանեմ, քանի որ ձեր միտը չեն գալիս մեղքերը: Մենք կքննենք Աստծու պատուիրանները մի առ մի. լսեցէք ինձ և մի խռովիք: Ազատ խօսեցէք և մի վախենաք ամեն ինչ ասելու:

Մի Աստուած միայն կըպաշտես,
Եւ կըսիրես բոլոր սրտովդ:

—Արդեօք որևէ մէկին կամ մի բան այնքան սիրե՞լ էք, ինչքան Աստծուն: Նրան սիրե՞լ էք ձեր բոլոր հոգով, բոլոր սրտով և ձեր սիրոյ բոլոր զօրութիւնով:

Սաբոն քրտնում էր իւր մտքերի ճնշման տակ: Նա պատասխանեց.

—Ոչ: Ո՛հ ոչ, տէր հայր: Ես սիրում եմ իմ արարիչ Աստծուն այնքան, որքան կարող եմ: Այդ—այո—ես նրան շատ եմ սիրում: Ասեմ՝ թէ որդոցս չեմ սիրում, ոչ այդ ես չեմ կարող: Ասեմ՝ թէ որ հարկաւոր լինէր ընտրութիւն անել նրանց և Աստուծոյ մէջ, այդ չեմ հերքում: Ասեմ՝ թէ որ կարևոր լինէր 100 ֆրանկ կորցնել Աստուծոյ սիրոյ համար, ես կըհամաձայնէի, այդ կարող չեմ: Բայց ես նրան շատ եմ սիրում այնուամենայնիւ:

—Նրան ամեն բանից առաւել պէտք է սիրել:

Եւ Սաբոն բոլորովին պատրաստակամ յայտնեց.

—Ես կանեմ ինչ կարող եմ, տէր հայր:

Աբբա Մարտիմը շարունակեց.

Աստծու անունով չերդնուս,
Ոչ էլ ուրիշ բաներով:

—Արդեօք երբէք որևէ երդում արա՞ծ էք:

—Ոչ, ո՛հ, այդ ոչ:—Ես երբէք, երբէք չեմ երդվում: Երբեմն բարկացած վայրկենին ասում եմ այս «Աստուած գիտենայ». հաւատացնում եմ, որ ես երբէք չեմ երդվում:

Քահանան կոչեց.

—Հէնց այդ իսկ է երդնուլը: Եւ վեհութեամբ ասաց.

—Այլևս չանէք այդ: Ես շարունակում եմ.

Կիրակի օրերը սուրբ կըպահես,
Աստծուն ծառայելով ի սրտէ:

—Կիրակի օրերն ինչ էք անում դուք:

Այս անգամին Սաբոն ականջի յետևն սկսաւ քերել:

—Ես ծառայում եմ կարողութեանս չափ, տէր հայր: Ես նրան պաշտում եմ.. իմ տանս: Ես աշխատում եմ կիւրակիները...

Քահանան վեհանձնութեամբ ընդհատեց նրան...

—Ես գիտեմ, դուք ապագայում առաւել վայելուչ վարք կունենաք: Ես յաջորդ երեք պատուիրաններն անցնում եմ, վստահ լինելով, որ դուք առաջին երկուսի դէմ մեղանչած չէք լինիլ: Արդ տեսնենք վեցերորդը և իններորդը: Ես վերսկսում եմ.

Ուրիշների ինչքը չյափշտակես
Եւ չսեպհականես գիտութեամբ:

—Ուրիշի ինչքը իւրացրած կա՞ք որևէ միջոցով:

Սակայն այս նուագ Թէոդուլ Սաբոն վիրաւորուեց.

—Ո՛չ երբէք, ոչ երբէք: Ես մի պատուաւոր մարդ եմ, տէր հայր: Այդ ես, արդէն երդվում եմ: Ես չեմ ասում՝ թէ միքանի ժամ աւելի հաշուած չեմ աշխատանքս այն մարդկանց վրայ, որոնք կարող են վճարել, ո՛չ, ես այդ չեմ ասում. չեմ ասում որ երբեմն մի քանի սանտիմ աւել չեմ գրում հաշւում, բայց միայն մի քանի սանտիմ ոչ աւելի, այդ ես չեմ ասում: Բայց գողանալ, ոչ, ո՛հ, բայց այդ ոչ երբէք:

Քահանան խստութեամբ կրկնեց.

—Մի սանտիմ միայն իւրացնելն իսկ գողութիւն է: Այդ այլևս մի անէք:

Սուտ վկայութիւն չտաս
Եւ չստես ոչ մի կերպ:

—Սուտ խօսած կա՞ք:

—Ոչ, այդ ոչ երբէք: Ես ստախօս չեմ ամենևին. այդ իմ յատկութիւնն է: Ասենք, որ ես երբեմն երբեմն սուտ պատմութիւններ արած կամ, բայց ոչ սըրտաց: Ասենք, որ ես չեմ ասում, թէ երբեմն հաւատացրած չլինիմ այն, ինչ որ ինձ օգտակար էր, բայց ոչ ճշմարիտ, այդ չեմ ասում: Բայց որ ես ստախօս լինիմ, ոչ, ես ստախօս չեմ:

Քահանան ասաց միայն.

—Զգոյշ եղէք այսուհետև:

Յետոյ նա արտասանեց.

Չցանկանաս երբէք
Առանց ամուսնութեան:

—Արդեօք ցանկացե՞լ էք ուրիշ կնոջ կամ ունեցե՞լ էք մի ուրիշ կին բացի ձեր կնոջից:

Սաբոն անկեղծութեամբ աղաղակեց.

—Այդ ոչ երբէք, ո՛հ, այդ ոչ, տէր հայր: Իմ խեղճ կնոջս դաւաճանել, ոչ, ոչ: Ոչ իսկ մատիս ծայրով, ոչ մտքով և ոչ գործով, ճշմարիտ եմ ասում:

Նա լռեց մի քանի վայրկեան, յետոյ աւելի ցածր ձայնով, իբրև թէ մի կասկած զարթնած լինէր նրա մէջ:

—Երբ ես քաղաք եմ գնում, գնում եմ ասենք մի տուն, որ դուք գիտէք, մի տուն մի քիչ ծիծաղելու և զուարճանալու համար միայն, այդ ես չեմ մերժում... բայց ես վճարում եմ, տէր հայր, ես միշտ վճարում եմ. այն վայրկենին երբ մարդ վճարում է. . .

Քահանան այլևս չշարունակեց և թողութիւն տուաւ:

Թէոդուլ Սաբոն կատարեց եկեղեցու դասի վերանորոգութիւնը և խոստովանում էր ամեն ամիս:

Թարգմ. Փրանս. Ն. Ք.

ՆԵՐՍԷՍ Ե *)

(ՆՈՐ ԳԾԵՐ ՆՈՐԱ ԿԵԱՆՔԻՑ)

Բ.

Դամօ մականուանած բայազիդցի Յովհաննէս վարդապետը, որ յայտնի էր իւր անվայել վարք ու բարքով և որ արդէն իւր բազմադիմի անկարգութիւնների համար քանիցս անգամ բանտարկուած էր, և վերջին անգամ հազիւ կարողացել էր ռուս և թուրք աստիճանաւորների միջնորդութեամբ ազատուել «արգելանքից», 1828 թուի յունուարի 6-ի լուսադէմին երեք ժամին իւր անկարգութիւնները հասցրեց մինչև այնտեղ, որ հրապարակով եկեղեցոյ գաւթում մի քանի միաբանների ներկայութեամբ ծեծեց ուրարակիր տիրացու Մկրտիչ Բարսեղեանցին այն աստիճան, որ տիրացուի պարանոցը բոլորովին վիրաւորուած էր և «զճանկեալ տեղիսն պատառոտեալ»: Բայց որովհետև առաջուց էլ բազմաթիւ բողոքներ էին մտել կառավարութիւնն այդ վարդապետի անպատշաճ արարմանց առթիւ, ուստի կառավարութիւնը նոյն օրն իսկ Քրիստոսի ծննդեան և մկրտութեան օրը համար 2 յայտարարութեամբ յայտնում է Ներսէս արքեպիսկոպոսին եղելութիւնն և հարցնում, թէ ինչ եղանակով նա կը հրամայէ դատ առնել, որ միևնոյն շաւղով կառավարութիւնն էլ ձեռնամուխ լինի սոյն հոգևորականի «յետ ու առաջ արարմանցն»:

Ներսէս արքեպիսկոպոսը 1828 թուի յունուարի 9-ին համար 1 գրութեամբ հրահանգ է տալիս կառավարութեան, թէ ինչ ձևով պէտք է բանտարկեն նորան, մինչև որ կառավարութիւնը քննելով նորա մասին եղած գանգատները՝ մի վճիռ կը սահմանի նորա մասին:

Ահա այդ գրութիւնը.

« Գիր ձեր առ իս ընդ օրինակացն
« վկայաբանութեանց Աճարօն վարդապե-
« տի և սարկաւագ Թադէոսի 'ի 6 ամսոյս
« 2 համար ընկալայ և վշտացայ բաւա-
« կանութեամբ չափ, զի անպատշաճ կա-
« ռավարութիւն սրբոյ Աթոռոյն՝ բացեալ
« է ինքեան ընդարձակութեամբ անխըր-
« տիր անձանց զգուռն ամենայն ան-
« պատշաճութեանց, և խափանեալ զամե-
« նայն զվայելչութիւնս պատշաճեալս
« հոգևորականութեանց կամ մեծ վայել-
« չութեանց սրբոյ մայր եկեղեցւոյ ամե-
« նայն հայոց:
« Յօհաննէս վատահամբաւեալ աբեղայ
« Դամօ մականուանեալ զի յայտնեալ
« յանձին իւրում զայնքան ամեհի բնա-
« ւորութիւն անըզգայ գրութեամբ՝ զը-
« տանի 'ի վերայ ամենայն անցելոցն
« անստրջանալի դարձեալ՝ մինչև համար-
« ձակեալ է յետ հանելոյն զինքն յար-
« գելանաց իւրոց միջնորդութեամբ աս-
« տիճանաւորաց ռուսաց և թուրքաց՝
« յանդգնել 'ի հրապարակի ընդ հովա-
« նեաւ սրբոյ եկեղեցւոյն, զգետնի հար-
« կանել զՄկրտիչ սարկաւագն Բարսե-
« ղեան և ծեծել զնա բռնցի՝ և աքացի
« կամ աւելի ևս խեղդել զնա որպէս
« յայտնի լինի 'ի վկայագրոյն սարկաւա-
« գի յառաջ քան զօրինաւոր վճռահատու-
« թիւնըս վասն ամենայն վնասապարտու-
« թեանց նորա, յանձն առնեմ կառավա-
« րութեանն կարգել նմա զմի պահապան
« զարաւուլ ասացեալ՝ այնպէս՝ որ նըս-
« տուցեալ զնա յիւրումն սենեկի, 'ի ցը-
« բեկի թողցէ զգուռն բաց, այլ ոչ թո-
« ղացուսցէ զնա ելանել արտաքոյ քան
« ըզգուռն վասն զբօսանաց. իսկ վասն
« հարկաւորութեան տարցէ զնա յառաջոյ
« իւր և կացեալ ինքն յառաջոյ ներքին
« աստիճանաց հարկաւորութեանց տե-
« ղոյն, սպասեսցէ մինչև ելցէ, և այն-
« պէս արկեալ զառաջեաւ, տարցէ զնա
« և մուծցէ 'ի սենեակն իւր. իսկ 'ի
« գիշերի փակեսցէ 'ի վերայ նորա զգուռն
« սենեկին, զի մի կարասցէ նա փախչել,
« և ինքն ննջեսցէ առ դրանն, կամ թէ
« կարելի իցէ միւս ևս անձն զօրեղ ըն-
« կե՛ր յատկացուցեալ վասն օգնականու-
« թեան պահապանին, փակեսցեն 'ի ներ-
» քուստ զգուռն և ինքեան ևս անդէն
« 'ի սենեկի ննջեսցեն ընդ նմա այնպիսի
« զգուշութեամբ զի մի կարասցէ նա փա-
« խչել և կամ վնաս ինչ յառաջ բերել
« նոցա:
« Սուր մեծ կամ փոքր որպիսի են
« սխեալքըն 'ի թրոյ 'ի կացնէ և յայլոց
« մինչև ցխոխուռ և ցդալամթրաշ մի բնաւ
» գտցի առ նա կամ 'ի սենեկի նորին,
« նոյնպէս և ոչ փայտ, կամ մահակ և
« քար շարժական յարմար 'ի հարկանել
« հանկարծիւ, զգուշասցին և պահա-
« պանքն յաղագս սրոյ իւրեանց եղելոյ
« ընդ ինքեանց, կամ ոչ պահելով ընդ
« իւրեանս, և կամ արժանաւոր զգաս-
« տութեամբ մինն յերկուց միշտ արթուն
« կալ և ոչ բնաւ հաւատալ առ այն-
« քան ամեհի բարուք ծանուցելոյ ըստ
« գործոց իւրոց:
« 'Ի ժամանակի ժամերգութեանց
« տարցեն զնա վեղարաւ իւրով և փիլո-
« նաւ՝ և կացուսցեն 'ի ներքին կողմանէ
« առ դրանն հիւսիսային կամ հարաւային,
« և կերակուր և ըմպելի տացեն նմա հաց
« և ջուր միայն ռաջ, իսկ 'ի շաբաթ
« և 'ի կիւրակի յաւելցեն ընդ այնս նաև
« զմի տեսակ կերակուր 'ի պատրաստե-
« լոցն վասն միաբանութեանց:
« Եւ այսպէս պահպանեսցեն զնա
« մինչև ձեռնհաս լինիցի կառավարու-
« թիւն վճռադատել վասն նորա ըստ
« կանոնաց զարդարն և զիրաւացին»:

Կառավարութիւնն այդ գրութեան հիման վրայ սկսում է քննել այն ամեն բողոքները, որոնք մտել էին կառավարութեան մէջ նորա առթիւ, և նոցանից բաւական համարեց վճռատալ միայն նախընթաց տարուայ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին մտած

---

*) Տես «Արձագանք» № 17.

նակարգ գրատունն ունենար, սակայն խնդիր է թէ գրադարան անուան արժանի մի բան ունի՞ այդ դպրանոցը:

Իւր ժամանակին այդ դպրանոցը ունեցել է իւր գրատունը և մինչև իսկ առաջին Հայ տպարանը Տփղիսում, սակայն ո՞ւր են այդ ամենը: Այս քանի տարի էր ահա այդ հիմնարկութեան գրատուն ասուած բաժինը մի մեծ ամբար էր, ուր խառն ի խուռն ածած էին ամեն տեսակ գրքեր:

Նորերս առիթ ունեցանք տեսնելու Ներսիսեան դպրանոցի գրատունը և չենք կարող մեր գոհութիւնը չյայտնել: Անցեալ ուսումնական տարուան ընթացքում դպրոցի կրկնողութեան ուսուցիչ պ. Գ. Հալաջեանը ձրի յանձն է առել կարգի բերել գրատունը: Այժմ կարելի է ասել, որ դպրանոցն ունի գոնէ մի սենեակ, որ գրադարան կարելի է կոչել: Մասնագիտութիւնից բաժանած գրքերը թուագրած և մաքուր պահարաններում շարած գեղեցիկ տպաւորութիւն են գործում: Երկար և մաքուր սեղանի վրայ առձեռն գործածելի գրքերը շարած դիւրութեամբ ծառայում են ցանկացողին: Փակալնած մատեաններում ամեն գիրք ճշտութեամբ նշանակուած է, իսկ մատեանը կնքած հոգաբարձութեան կնքով, այնպէս որ այսուհետև գրքերի կորուստ անհնարին է: Լաւ է անագան քան երբէք:

Ներսիսեան դպրանոցի մատենադարանն անսպառ աղբիւր էր Թիֆլիզի կիրակնօրերի տօնավաճառին, աշակերտ, ուսուցիչ, հոգաբարձու և ծառայ իրենց մասն գրքերը վաճառ են հանել այնտեղ. այժմ երբ գրադարանն այնքան գիրք ունի, որից միայն նրա հին ճոխութիւնը կարելի է գուշակել, նոր է բարեկարգուած: Իսկ այդ բարեկարգութիւնն ինչքան կըտևի յայտնի չէ, որովհետև ինչպէս լսում ենք, պ. Հալաջեանը մըտադիր է թողնել գրատունը, որ նրանից յետոյ երևի դարձեալ մի որևէ համբակի կըյանձնուի:

* * *

ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՒ ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՔՆԵՐԸ

Յայտնի մանկական բժիշկ՝ պրօֆեսօր Դէմմէ Բերնում նորերումս մի ճառ խօսեց ալքօհօլի ազդեցութեան մասին երեխաների կազմուածքի վրայ: «Ապագան պատանեակներինն է» և երբ երեխաների գործածած ոգելից ըմպելիքների վնասակար հետևանքները վերացւում են, մատաղ սերունդըն աւելի ուժեղ ու երկարակեաց է լինում: Այդ մտքով ոգևորուած, պրօֆեսօր Դէմմէն բացատրեց իւր վերին աստիճանի հետաքրքրական ու խրատական դիտողութիւններն այդ խնդրի նկատմամբ:

Ժողովրդի թէ ամենաղքատ և թէ հարուստ դասակարգերում չափազանց շատ ալքօհօլ են ներմուծում երեխաների կազմուածքի մէջ: Առաջիններն այդ անում են այն սխալ կարծիքի վրայ հիմնուելով՝ թէ դա լըցնում է յաճախ անբաւարար սընունդի պակասը. իսկ ունևորները դարձեալ այն թիւր հայեցմամբ՝ թէ գինով երեխայի ուժերն ամրանում են: Սակայն նոյն իսկ դեղաբանական տեսակէտով ալքօհօլը թոյն է համարւում: Գերզօրայքի մէջ գործածուող կոնեակը պարունակում է իւր մէջ 55 պրօցենտ ալքօհօլ. օղին՝ 45—70 պրօցենտ. սովորական գինիները 10—20 պրօցենտ ու գարեջուրը՝ 3,8—5,1 պրօցենտ: Այդ ըմպելիքներից մէկը կամ միւսն ընդունելուց յետոյ երեխաների մէջ նկատւում է սրտի սաստիկ բաբախումն ու արագ շնչառութիւն: Ալքօհօլի ազդեցութիւնը կենդրոնական նեարդային սիստեմայի վրայ երկու կերպ է արտայայտւում: Նախ նկատւում է գըրգռուած դրութիւն, յետոյ դրան հետևում է նեարդերի գործունէութեան թուլութիւն: Թէ հասակաւորների և թէ երիտասարդների նկատմամբ անհատական դիմացկունութիւնը շատ մեծ տարբերութիւն է ցոյց տալիս: Դրա համեմատ նաև վաղ թէ ուշ կարող են տեղի ունենալ կազմուածքի վընասներ:

Երկուսից մինչև հինգ տարեկան երեխաների մէջ նկատուած ստամոքսի ու աղիքների քատառի մեծագոյն մասի պատճառը որոնելու է այն ոգելից ըմպելիքների մէջ, որոնք տըրւում են երեխային կերակրի հետ: Միանգամայն զարմանալի է ալքօհօլի յարատև գործածութիւնը նաև երեխայի աճման վրայ, որի հետ յայտնւում են ողնոթեքութեան ցաւեր: Նկատուած են այնպիսի իրողութիւններ, որ ալքօհօլից դերծ մնացած երեխաների հասակը բաւական աճում է, հէնց որ նրանք դադարում են գինի խմելուց: Նեարդային սիստեմը նոյնպէս կրում է մեծամեծ վնասներ: Երեխաների նեարդերի վերին աստիճանի քնքուշ տարրերն աւելի դիւրութեամբ են ենթարկվում թոյների ազդեցութեանը, քան հասակաւորներինը:

Ալքօհօլի առատ գործածութեան հետևանքը լինում է շատ անգամ վերնոտութիւն (epilepsie) և շարժական ախտ: Դէմմէն շատ անգամ յաջողում էր, ալքօհօլի վնասակար ազդեցութիւնը հեռացնելով, բժշկել այդ երկու ախտերը:

Այն երեխան, որ սովորած է ոգելից ըմպելիքներին, իւր կամքի հաստատութիւնը թմրեցնող ալքօհօլի ազդեցութեան տակ, այլևս անկարող է զսպել իւր կրքերը և հետըզհետէ անկարող է գտնւում, կամ երբէք չէ սովորում սանձահարել իւր «ես»: Ժամանակակից երիտասարդութեան կամքի յիշողութեան տըկարանալը, նրա արտասովոր թուլութիւնն ու յոգնածութիւնը պէտք է վերագրել նոյն ալքօհօլի չափազանց գործածութեան: Դէմմէն առիթ է ունեցել փորձով ստուգել գինու չափաւոր գործածութեան ազդեցութիւնը բազմաթիւ 10—15 տարեկան երեխաների աշխատութեան եռանդի վրայ: Այդ երեխաները ստանում էին նախաճաշի և ճաշի ժամանակ 70—100 գրամ թեթև գինի, ջրախառն և խմում էին ուտելու միջոցին: Այդ ըմպելիքը տրւում էր նրանց շարունակ մի քանի ամիս, յետոյ նոյնքան ամիսներ զրկում էին նրանց այդ խըմիլիքից: Փորձը ցոյց տուեց, որ երեխաների վրայ գինի գործածելու միջոցին, նկատւում էր յոգնածութիւն, քնաբերութիւն և նուազ հակումն դէպի մտաւոր զբաղմունք. նրանց քունն անհանգիստ էր, բազմիցս ընդհատւում էր, ուստի և չէր այնչափ կենդանարար: Երեխաներից երկուսի համար վերը յիշած երևոյթներն այնքան անտանելի էին, որ նրանք իրանք խնդրեցին ազատել իրենց գինուց:

Սակայն երեխան ենթակայ է և ուրիշ կորստաբեր ազդեցութիւններ: Ծնողների հարբեցողութիւնը զօրեղ կերպով նուազեցնում է նրանց ժառանգների կենսական ոյժն ու առողջութիւնը: Շվեդիայում հարբեցողութեան դէմ գրուած օրէնքի ներմուծելուց յետոյ, բոլորովին փոքրացել է ընդհանուր թուլակազմութեան ու սաստիկ կարճահասակութեան պատճառով զինուորական ծառայութեան համար անպէտք համարուածների թիւը: Դէմմէն համեմատեց Բերնում 57 երեխաներ այնպիսի ընտանիքներից, ուր հարբեցողներ կային, 67 ուրիշ երեխաների հետ առնելով սրանց տասը չափ բոլորովին չխմող ընտանիքներից: Եւ բանից դուրս եկաւ, որ առաջիններից միմիայն 10, այսինքն 17,5 պրօցենտ ցոյց տուին խելքի բնական զարգացումն, մինչդեռ վերջիններից 50 հոգի, այսինքն 81,9 պրօցենտ:

Այդ թուանշաններն ինքն ըստ ինքեան շատ աւելի պերճախօս են քան որևէ նոյնիսկ ամենասրամիտ բացատրութիւն կամ եզրակացութիւն:

«Ն. Վ.»

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Առաջին անգամ երբ այստեղի լրագրներում հրատարակուեց թէ պ. Պետրոսեանը Թիֆլիսից մինչև այստեղ է եկել դերասան ու դերասանուհի տանելու, մեզանից շատերը զարմանում էին, թէ ինչ հարկ կայ որ այդպիսի մի բանի համար մասնաւոր մարդ գայ և հետևաբար աւելորդ ծախքեր լինին, մինչդեռ այստեղի որևէ մի ծանօթի և՛ս յանձնարարելով կարելի էր կարգադրել: Սակայն իրողութիւնը հակառակն է ապացուցանում. այսքան օրեր են այստեղ է պ. Պետրոսեանը և ամեն օր այս ու այն գիւղն է գնում, այս ու այն մարդու հետ է տեսնւում, հեռագիր հեռագրի ետևից և նամակների վերջը չի հասնում, անիմաստ չնչին էնտրիգների վախճանը չի գալիս. մարդ մնում է զարմացած թէ այսպիսի պարզ բանից որքան ահագին էնտրիգներ են ծնում ու ծնում: Վերջիվերջոյ կարելի եղաւ գտնել ինչ որ եկած էր փնտռելու. բայց խնդիրն այնտեղ է որ գործի աւարտելու պահուն, երբ պայմանադրութիւնը պիտի կատարուէր այն նոր դերասանուհին, որի համար գրել էի նախորդ նամակիս, մէկէնիմէկ յայտնում է թէ չի կարող գալ, մինչդեռ մինչև այդ օրը գժուածի պէս ուզում էր գալ: Պետրոսեանը կայծակնահարի պէս եղաւ, բայց ինչ անես. աղջկան որոշումն անդառնալի էր շնորհիւ պ. Մանթաշեանցի շոգենաւի յարադարձ մեքենային. տարուան մէջ մի քանի անգամ խանգարւում է այդ շոգենաւի կաթսան: Սակայն ո՞վ կարող էր մտածել, թէ այդ կաթսայի այս վերջին անգամ խանգարուելը կարող էր պ. Պետրոսեանի ամբողջ ծրագիրն էլ խանգարել այն նոր դերասանուհու մերժումը... շոգենաւի տնտեսը իւր դիտաւորութեան համար աղջկան համոզում է չերթալ և խեղճ աղջիկը հաւատացած է թէ պիտի ամուսնանայ երիտասարդի հետ:

Մեկնելուն հազիւ 3—4 օր էր մընացել. պէտք էր մի ուրիշ դերասանուհի գտնել, իսկ այդպիսի կարճ ժամանակամիջոցում տիկին Փոհարիկից զատ ոչ ոքին կարելի էր յարմար տեսնել:

Պ. Պետրոսեանը իւր այս ըստ երևոյթին դիւրին բայց իրականապէս դժուարին ձեռնարկութիւնը ի գլուխ հանելուց յետոյ վաղն առաւօտ ճանապարհ է ընկնելու դէպի Թիֆլիզ տիկին Սիրանոյշի և պ. Թրեանի հետ ի միասին. . . միւսները յետոյ պիտի գան:

Թիֆլիզի թատերասէր հասարակութիւնն ապահով պէտք է լինի որ այստեղից բերուած դերասանուհիք և դերասան Թիֆլիզի խմբին միացուելով շատ լաւ կազմութիւն պիտի ունենան: Այստեղի հայերը մի առանձին յարգանքով են դիտում Թիֆլիզի հայոց այս ձեռնարկը և խօսում են նրանց մասին մի առանձին գնահատութեամբ, որ զովելի նախանձախնդրութիւն են ցոյց տալիս հայկական բեմի համար: Սակայն գնահատութեան իսկական արժանիքը գործի յաջող յարատևութեան և նրա բարձրանալու մէջ է կայանում, և Թիֆլիզցիք ահա այս կէտի մէջ պարտաւոր են փնտրել իրենց բուն պարծանքը:

Apropos! Արդէն մութն ընկած էր (և հետևեալ օր առաւօտ շոգենաւը պիտի մեկնէր), երբ պ. Բեննեմէճեան իւր տիկնոջ հետ գաղտագողի խնդրում են տեսակցել պ. Պետրոսեանի հետ: Մութին գնացինք քաղաքի հեռաւոր այգիներից մէկը և այնտեղ տեսնուեցանք. յայտնեցին թէ Մնակեանից վախենալով չէին համարձակւում գալ տեսնուել. իրենց պայմաններն առաջարկեցին. ամենայն հաւանականութիւն կայ որ դրամատիքական ընկերութիւնը պիտի ընդունի այդ պայմանները, որից յետոյ Բեննեմէճեան իւր կնոջ հետ անմիջապէս ճանապարհ պիտի ընկնեն դէպի Թիֆլիզ: Այնպէս պիտի անեն որ մինչև շոգենաւը մտնելը Մնակեանը տեղեկութիւն չունենայ, ուստի խնդրում եմ որ «Արձագանքն» էլ իւր ընթերցողներից զատ ուրիշ մարդի չյայտնէ:

ՎԱԳԻՆԱԿ

Յ. Գ. Այսօր վախճանուեց Յունաց եկեղեցու պետ՝ Դիոնիսիոս պատրիարք, որի օրով լուծուեց Յունաց առանձնաշնորհմանց խնդիրը:

Արտասահմանի հայ լրագրերից քաղում ենք հետևեալ լուրերը.

—Թիւրքիաի հայերի Ազգային Ժողովը իր յուլիս 12/24-ի նիստի մէջ նոր Կրօնական Ժողովը ընտրելէ ետք, իր յուլիս

երեք խնդրագիրներին, այն է մշեցի Գէորգ վարդապետի, նորա սպասաւոր Մկրտիչ Բարսեղովի և Խիզրաշի Ադամի, միւս գործերի մասին յունուար 17 յայտարարութեամբ առարկելով թէ.

‹ ’Ի նշանակեալ թուոց անտի մինչև
‹ ցայսօր ժամանակի ’ի սոյն ստորագրեալ
‹ Թիւ որչափ քննեցան ’ի կառավարու-
‹ թեանս, այնչափ գտաւ ընդ պարսաւո-
‹ րութեամբ յիշեալ Դամօն՝ և ծագեցան
‹ ատելիք և անախորժելիք անվայելչու-
‹ կանք հոգևորականութեան... ըստ որոյ
‹ և մեք զգարշելին ծածկել բարւոք հա-
‹ մարեալ... զվճիռն միայն նշանակել ըստ
‹ արժան դատեցաք...›

Կառավարութիւնը հետևեալ վըճիռն է տալիս Դամօի մասին. — Ադամի զրկանքը վճարել Դամօի վանքում ունեցած ստանալիքներից. նորա պատճառով վանքի կորած ուղտերի գինը պահանջել նորա Բայազիդի գոյքերից. և իրան ուղարկել Սևան, որի համար խնդրում է Ներսէս արքեպիսկոպոսին որոշել ապաշխարութեան ժամանակամիջոցը և տեսակը և տէրութեան երկու ղազախ ուղարկել վարդապետին տեղ հասցնելու համար:

դ.

Կառավարութիւնը սուրբ Աթոռում գըտնուած աբեղաների «ներկայ անձնականօգտի» և սուրբ Աթոռին ապագայում պէտքական լինելու համար, ընտրում է նոցանից տասներկուսին, որոնցից վեցին նշանակում է քարոզիչ Երևանի և Արարատեան դաշտի շրջականներում քարոզելու առաջիկայ մեծի պահոց օրերում, և միւս վեցին՝ սուրբ Աթոռում շաբաթ և կիւրակի երեկոները քարոզելու, իւրաքանչիւրը նոցանից մի շաբաթ:

Այս կարգադրութեան մասին կառավարութիւնը յայտնելով իւր ծայրագոյն կառավարչին 1828 թուի յունուար 31 №13 յայտարարութեամբ՝ աւելացնում է, որ լաւ կլինէր թողնել վանքում նոցա, որոնք արդէն զանազան գործերով շրջել և քարոզել են դուրսը. իսկ շրջականերում ուղարկել նոցա, որոնք դեռ «ատեան չեն դուրս եկած, նախ՝ որ նոքա միգուցէ բազմաթիւ հոգևորականների առաջ վախենան և երկրորդ՝ «այլքն որք կըրթեցեալք են ընդ աշխարհականաց և աչք սոցին անծանօթ սմ մնացեն»:

Ներսէս արքեպիսկոպոսը փետրուարի 7 համար 7 գրութեամբ *), որ կառավարութեան ուղարկուեցաւ Զմիւռնացի մահտեսի. Յովհաննէս աղայի ձեռքով, պատասխանելով կառավարութեան առաջարկութեան՝ յայտնում է իւր կարծիքը, թէ ամենևին վախենալու բան չունի քարոզիչը հոգևորականաց բազմութիւնից և թէ առաջարկած աբեղաներից ոչ բոլորը պատրաստուած են քարոզելու. ուստի առաջարկում է, որ ով ցանկանում է քարոզել՝ նախ թող իւր խօսելիքը գրէ և ներկայացնէ կառավարութեան և ապա թող խօսի, իսկ ովքեր որ գրել չեն կարող ինչ որ պիտի խօսին, նոքա և չեն կարող քարոզել. ուստի և լաւ է համարում, եթէ այդպիսիք հրաժարուեն «աստուած ընդդէմ յանդգնութեանց», և պիտանի թող լինին իրանց յարմար պաշտօնի մէջ:

Ներսիսի այդ գրութեան պատասխանում է կառավարութեան անդամ Մանուէլ վարդապետը, որով մի տեսակ ներողութիւն խնդրելով՝ յայտնում է, թէ Ղուկաս կաթուղիկոսի մահուանից մինչև այժմ երեսուն տարի շարունակ «տիրողութեանց» երեսից վայելչականութիւնը նուազել է և որոնք այժմ կան, երևի թէ այն ժամանակ կամ նոր էին ծնուած և կամ տասնամեայ էին, ուստի խնդրում է այս անգամ ներել և «Թողուլ մերս տկար տը«նօրէնութեան. գուցէ խրախուսեալ և «նոցա՝ հորդեսցին ճանապարհ բարձու «Սրբազնութեանդ նկատեալ նպատակի». որովհետև սրբազանի հրամանից երևում է թէ իսպառ արգելւում է աբեղայից քարոզել, և այդ նորահաս եռանդոտ աբեղաները այս տարի ևս պիտի մնան առանց քարոզելու, ուստի ինքը (Մանուէլ վարդապետը) խնդրում է իրաւունք տալ, որ ցանկացողները միայն սուրբ Աթոռում և Վաղարշապատում մի կամ երկու անգամ քարոզեն, եթէ լսողների օգտի համար չէ, գոնէ իրանց վարժութեան համար:

« Յեւն անցեալ ամսեան յունուարի
« գրութեամբ կառավարութեանդ առիս
« 15 համարաւ հանդերձ նշանակու-
« թեամբ անուանց երկոտասան վարդա-
« պետաց և աբեղայից ընտրելոց վասն
« քարոզելոյ՝ վեց ’ի տաճարի սրբոյ Կա-
« թուղիկէ Էջմիածնի, և վեցն ’ի գիւղն
« Աթոռոյ, յԵրևան քաղաքի, ’ի Կոնդ,
‹ և ’ի Զօրագիւղ, յՆշտարակ և յՕշա-
› կան, ’ի Սարտարապատ հանդերձ շրջա-
‹ կայիւքն, և ’ի Կողբ, պարտաւորու-
‹ թեամբ քարոզելոյ երիցս ’ի շաբաթուն
‹ ’ի չորեքշաբթի, ’ի շաբաթու և ’ի
« կիւրակէի յերեկոյսն: Ընկալայ և վասն
‹ բար- ւոք փութոյն կառավարութեան
« և ամենա- բարեպաշտ խորհրդածու-
‹ թեանցն ուրախ եմ յոյժ:
« Բայց յայտ է՝ զի ատեան սրբոյ ե-
‹ կեղեցւոյ՝ է ատեան Աստուծոյ ահաւո-
« րին, և ատենաբանութիւն քարոզու-
‹ թեան անդէն՝ է աստուածաբանութիւն
« իսկ և իսկ. քանզի առնու զբնաբան
« իւր քարոզիչն ’ի բանից Աստուածայ-
« նոց, այն է, ’ի մարգարէութեանց,
« յառաքելութեանց, և յաւետարանու-
« թեանց Քրիստոսի Աստուծոյ:
« Ապաքէն լերուք իրաւախոհք՝ թէ
‹ նշանակեալքն այնոքիկ՝ ամենեքին
‹ գտանին արդեօք բաւականք ’ի լու-
« ծանել և ’ի բացայայտել զբնաբանս ըստ
« արժանի Աստուածաբանելոյ բնագրացն,
« և ատենաբանութիւն նոցա ըստ կարո-
‹ ղութեան մարդկան պատշաճիցի՞ ար-
« դեօք ատենի Աստուծոյ:
« Այլ զի գրէք՝ թէ մի մնասցեն
« յերկչոտս յատենի բազմութեան հոգև-
« որականաց. այնոքիկ որք չեն տեսա-
« ւին ելեալք յատեան ’ի զանազան ե-
‹ կեղեցիս ժողովրդեան, ընդ քաղաքս
« և ընդ գեօղս արտաքոյ Աթոռոյն.
« ինձ թուի՝ թէ լաւ իցէ գտանել ’ի
« կասկածանս վասն ահի երկիւղի Աս-
« տուծոյ յատեան սրբոյ եկեղեցւոյ, քան
‹ լինելն յատուգն՝ որ անահ աներկիւղ
« յեցեալ ’ի սդլութիւն ունկնդրացն
« որոտաձայնս ղողանջէ խուժ և դուժ:
‹ Եւ որպէս մարթէ ապացուցանել, այդ
« իսկ է՝ որ դաժոռ մեծ քահանայապե-
« տութեան ամենայն հայոց զսուրբ կա-
‹ թուղիկէն Էջմիածին, և զընդհանրական
« Աթոռ սրբոյ Երուսաղէմի, և զգերա-
« հռչակ տաճար վանաց սրբոյ Կարապե-
‹ տի և ամենայն այլոց վանօրէից Հայա-
« ստան ազգի՝ յաւիտենից ժամանակաց
« կացուցանէ այրս աւագակաց պանծա-
« ցելոց ’ի գեղափայլ գլխարկս այծենեաց
‹ Գաղատիոյ:
« Առաքեալն կանխաւ յառաջ զին-
« քեանս իսկ զգաղատացիս հրատարակէ
« անմիտս և նախանձարարս և անհնա-
« զանդս ճշմարտութեան, իսկ արդեաք
‹ զնոցայն իսկ այծենիք բարձրացուցա-
« նեն ’ի գլուխս սպրդանք անձանց, և
‹ որ առաւելն է, հանդիսադիր ամենի-
« մաստ վարդապետութեանց, և նովաւ
« յարձակեալք ’ի վերայ եկեղեցւոյ Աս-
« տուծոյ և ժողովրդեան նորա՝ կեղե-
‹ քեն կողոպտեն ըզ ժողովուրդն և ե-
‹ կեղեցին միանգամայն:
« Բայց զի յանդգնութիւն իմն ինձ
« գրեսցին բանք իմ այսոքիկ, մատու-
‹ ցեալ աւասիկ ատենի կառավարութեան
‹ ընդհանրական Աթոռոյ մօրն ամենայն
‹ եկեղեցեաց, ցանկամ, վասնորոյ և ա-
« ղերսեմ լինել արդարաքննին. Ուր ե-
« թէ կարցեն զտեղի և յայտնեսցեն ա-
‹ նարատ կամաց հարազատ ազդեցու-
« թիւնք, խնդրեմ, զի արժան համարեսցի կառավա- րութիւնն դաստիարակել
‹ զքարոզիչսն յուսումնարանի դիտու-
« թեանց և մարզել զկասկածանս նո-
‹ նոցին յանդիման բազմութեանց՝ հաս-
‹ տայոյս բըժանօք յայտնութեանց ար-
‹ դեանց հոգւոյ և մտաց իւրեանց ’ի
« ջատագովութիւն անձանց և ’ի փառս
‹ շնորհազարդողին զինքեանս աստուծոյ՝
‹ և դաստիարա- կաց իւրեանց: Այլ թէ
‹ ոչ այնպէս, լաւ ևս իցէ վասն եկեղե-
‹ ցւոյ և վասն ժողովրդեան յետս յետս
‹ ընկրկել տղխաց յատենէ յաստուծոյ
« յեկեղեցւոյ, քան յառաջ մղեալ զան-
« ձինս յանդգնութեամբ և արհամարհա-
› նօք Աստուծոյ և եկեղեցւոյ սրբոյ նորա
‹ ’ի դատապարտութիւն ինքեան և ’ի
‹ գայթակղութիւն ամենասուրբ Արեամբն
‹ Աստուծոյ գնեալ ժողովրդոց հաւատա-
« ցելոց:
‹ Իսկ ես զառաջին այժմ առ օգտի
‹ սրբոյ եկեղեցւոյ և վարդապետաց քա-
‹ րոզչաց Աւետարանի Աստուծոյ ամենայն՝
‹ որպէս զի արժանաւորեսցին ըստ բանի-
‹ ցըն առաքելականաց կրկին պատւոյ,
‹ աշխատութեամբ բանին և վարդապե-
« տութեամբ, աստուածային և սուրբ
‹ պարտաւորութիւն համարիմ կառավա-
‹ րութեան մայր եկեղեցւոյ ամենայն
‹ հայոց՝ օրէն յաւիտենական կարգեալ
‹ վասն ամենայն քարոզչաց. զի ըստ
‹ օրինի բարեկարգեալ ազգաց նախ՝
‹ զքարոզելիսն գրեսցեն քարոզիչք, և
‹ այնպէս ապա զգրեալն քարոզեսցեն
‹ յատենի, մինչև շնորհն Աստուծոյ զար-
‹ գացուսցէ զայն ատենաբանութիւն
« նոցա. ’ի պտղաբերութիւն հաճոյակա-
‹ նացն աստուծոյ և մարդկան և պակա-
‹ սեսցին եկեղեցւոյ ամենայն յանդգնու-
‹ թիւնք սնոտիապանծ ցոփաբանից:
« Գրութիւն քարոզից չէ ծանր իմն և
‹ տաժանուտ քարոզչաց, զի նիւթք
‹ քարոզից գոլով միշտ համառօտ և
‹ ենթադրեալ իմն: Որպէս տեսանին ա-
‹ ւանիկ քարոզքն եօթնկարգեան գրոց:
‹ Միշտ դիւրին է գիտողաց զքարո-
‹ զութիւն իւրեանց՝ գրել զայն բազում
« համառօտութեամբ ըստ պատշաճի:
« Ապաքէն որոք ’ի նշանակեալ վար-
‹ դապետաց՝ և աբեղայից բաւական լի-
‹ նիցի ’ի գրել զքարոզս, և ներկայա-
‹ ցուսցէ կառավարութեան զգրեալն,
« յառաջ կացցէ այնպիսին, և քարոզեսցէ
‹ ուր հաճոյ ինքեան լինիցի, և համա-
‹ բեսցի արժանաւոր գովութեանց և յար-
‹ գանաց վարդապետութեան. իսկ որ ոք
‹ ծանիցէ զինքն անբաւական ’ի գրել,
‹ լաւ ևս եղիցի նմա ճանաչել զանձն
« անբաւական ’ի քարոզել, և ’ի բաց
‹ հրաժարեցուցանել զանձն յաստուած
‹ ընդդէմ յանդգնութեանց յատենի ա-
‹ հաւորին աստուծոյ և կացցէ անդատա-
« պարտ աստուծոյ և ’ի մարդկանէ. որպէս
‹ անօթ պիտանի յիւրումն կարգի ’ի
« տան Աստուծոյ՝ ըստ վկայութեան ա-
‹ ռաքելական կտակարանացն››:

Համար 6 1827 դեկտ. 18

’Ի բերդն Երևանու:

[illegible]

(Կըշարունակուի)

26/7 օգոստոսի նիստին մէջ ալ ձեռնարկեր է նոր քաղաքական Ժողովը ընտրել։ 79 երեսփոխաններու մասնակցութեամբ քուէարկութիւնը կատարելով, հետևեալները ընտրուած են բացարձակ առաւելութեամբ. Տիարք՝ Գաբրիէլ Նորատունկեան, Տիգրան Նուսուփեան, Յովհաննէս Թորոսեան, Յովհաննէս Ազնաւուր, Համազասպ Պալլարեան, Իլիաս Զայեան, Գրիգոր Խտրեան, Տիգրան Խիմիւշկէրթեան, Միհրան Սէթեան, Սիմոն պէյ Մաքսուտ։ Քաղաքական Ժողովի 14 անդամներէ մնացած 4-ին ընտրութիւնը համեմատականի մնացած լինելով, երկրորդ քուէարկութեամբ ընտրուած են Տք. Տիգրան Բարաղամեան, Մկրտիչ Նասսեան, Ռէթէոս Պէրպէրեան, Ստեփան փաշա Ասլանեան։

Առհասարակ դիտել կը տրուի թէ այս անգամի Քաղաքական Ժողովը կազմութեան մասին նախորդներէն այն որոշիչ տարբերութիւն ունեցած է որ իր անդամները, գրեթէ ամենքն ալ, իրարմէ անկախ դիրք ունին և կարող են իրենց պաշտօնավարութեան ընթացքին մէջ անկախապէս իրենց կարծիքներ յայտնել օրուան խնդիրներու վրայ, որով և Ժողովի մեծամասնութեանը պիտի մնայ վճռական ձայնը. մինչդեռ անկէ առաջ մի քանի Քաղաքական Ժողովներու մէջ անդամներէն մէկին, ատենապետին, անձնական ազդեցութիւնը իր եռևէն կը քաշէր միւս անդամներու կարծիքը և այսպէս շատ անգամ ատենապետն որոշումներ կանէր, յետոյ Ժողովին ընդունել տալու ապահովութեամբ և մինչև իսկ երբեմն ալ առանց անոր գիտութեան։

Որչափ որ նորընտիր Քաղաքական Ժողովի ընտրութիւնը յաջող կը համարուի, սակայն լուր կայ թէ անդամները մեծ մեծ մասով մտադիր են հրաժարել։

Թէ Կրօնական և թէ Քաղաքական Ժողովներու ընտրութիւնը տեղեկագրուած է արդէն Բ. Դրան՝ վաւերացումն ընդունելու համար։

—Ամեն. Ս. Պատրիարք հայրն՝ ըստ որոշման Խառն Ժողովոյ՝ հետևեալ շրջաբերականը ղրկած է առ Առաջնորդս և Վանահայրս գաւառաց.

«Եկեղեցական կարգապահութեան պայմանաց համաձայն թէ և պէտք չէ որ առաջնորդք կամ տեղապահք նոցին, ինչպէս նաև վանահարք մեկնին իրենց վիճակէն ի Պոլիս կամ այլուր, առանց նախապէս գաւառական վարչութեան կամ Վանական տընօրէն Ժողովոյ հետ համաձայնութեամբ որոշելու իրենց պաշտօնատեղիէն հեռանալու հարկն, և առանց Ազգ. Կեդր. Վարչութենէն հարկ եղած արտօնութիւնն ստանալու, սակայն տեսնելով որ ստէպ զանցառութիւնք տեղի կունենան յայսմ մասին, որոշմամբ Խառն Ժողովոյ Կեդրոնական Վարչութեան արժան դատեցաք ասելու շրջաբերականաւ բոլոր առաջնորդաց և տեղապահաց նոյնին ինչպէս նաև վանահարց յիշեցնել կարգապահութեան և պատշաճութեան այս անխուսափելի պայմանաց գործադրութեան պէտքն. հետևապէս կը հրաւիրեմք և Ձեր սիրելութիւնն նըմանօրինակ պարագայից մէջ ըստ այսմ պէտք եղածն ի գործ դնել և տեղի չտալ զանազան անհաճոյ դիտողութեանց և մեկնութեանց։»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 9-ին լոյս տեսաւ Միտտլէր և որդի նշանաւոր հիմնարկութեան տպարանից ամենքից, մանաւանդ զինուորական շրջաններից, սաստիկ անհամբերութեամբ սպասուած մի գիրք, հանգուցեալ Ֆէլդ-մարշալ Մոլտկէի հեղինակութիւնը Ֆրանսո-պրուսական պատերազմի մասին։

Գրքի յառաջաբանը անհերքելի հետաքրքրութիւն ունի քաղաքական և զինուորական տեսակէտից։ Հեղինակը յայտնում է, որ արդէն անցել են այն ժամանակները, երբ վարձկան զօրքերի փոքրիկ բանակները միապետական հարստութիւնների շահերից դրդուած դաշտ էին արշաւում մի քաղաք, մի հողի կտոր, մի ձմերոցի տեղ յափշտակելու կամ խաղաղութեան դաշն կռելու համար։ Մեր ժամանակներում զէնքի են հրաւիրվում ամբողջ ազգեր. չկայ մի ընտանիք, որ այս կամ այն կերպով անմասն լինի պատերազմից, տէրութեան բոլոր դրամական աղբիւրները նրան են նուիրուած, մինչև անգամ տարուան եղանակների փոփոխութիւններն էլ չեն դադարեցնում պատերազմների ընթացքը։

Քանի ազգերն առանձնական կեանք կըվարեն, այնքան ժամանակ նրանց մէջ ընդհարումները կը շարունակուեն, որոց վախճանական լուծումն տալ առանց պատերազմի անհնարին է, բայց յօգուտ մարդկութեան կարելի է յուսալ, որ քանի պատերազմները զարհուրելի դառնան, այնքան նրանք քիչ կըկրկնուեն։

Մեր ժամանակներում խաղաղութեան սպառնում է ոչ թէ գլխաւորների պատուասիրութիւնը, այլ ազգերի տրամադրութիւնը, դժգոհութիւնը ներքին վիճակից, կուսակցութիւնների ձգտումները, մանաւանդ նրանց գլխաւորների։

Պատերազմ կարող է այժմ աւելի շուտով հրատարակել մի որևէ ժողով, ուր ոչ ոք ինքն ըստ ինքեան ամբողջ պատասխանատուութեան ենթակայ չէ, քան եթէ մի որևէ տէրութեան գլուխ, ինչպիսի իշխանութիւն էլ նա կ՚ուզէ ունենայ։ Առաւել դիւրին է գտնել մի խաղաղասէր տէրութեան գլուխ, քան թէ որևէ իմաստասէրի ժողով։ Մեծամեծ պատերազմները տեղի են ունեցել հակառակ իշխանների ցանկութեան և կամքի։ Մեր օրերը բորսան այնպիսի ազդեցութիւն է ստացել, որ նա մինչև անգամ կարող է ստիպել տէրութեան զինեալ բանակին, բանակին, որ իւր շահերը պաշտպանէ։ Եւրոպայի բանակները Մեկսիկա և Եգիպտոս ուղարկուեցան միայն haute finance-ի մի քանի գործերը կարգի բերելու համար։ Մեր օրերում այնքան նշանակութիւն չունի այն հանգամանքը, թէ արդեօք որ և է տէրութիւն պատերազմելու կարևոր ոյժ ունի, որքան այն հանգամանքը, թէ արդեօք նա ոյժ ունի մի պատերազմ խափանելու։

Մոլտկէի խօսքով այդպիսի հանգամանքներն էին 1870—1871 թըւականների պատերազմ յարուցանողը։ Նապոլէոնը պէտք է իւր դահական իրաւունքը հաստատէր քաղաքական և զինուորական յաջողութիւններով։ Ֆրանսիական բանակի յաղթութիւնները պատերազմի հեռաւոր դաշտերում չէին գոհացնում այլ ևս ազգին, Պրուսացոց յաղթութիւնը Սադովայի մօտ նրան վիրաւորական էր թւում. միւս կողմից էլ ազատական կուսակցութիւնը պեղում էր Նապոլէոնի հեղինակութիւնը և զօրութիւնը, ուստի մի օր էլ Ֆրանսիան լսեց իւր իշխանի բերանից, որ նա Գերմանիայի դէմ պատերազմել է ցանկանում։

Պատերազմի պատմութիւնը խիստ իրական (factisch) եղանակով և իսկապէս միայն գլխաւոր գծերով է առաջ բերած։ Գրքի Ա. գլխում, որի վերնագիրն է «պատերազմի պատրաստութիւն», հեղինակն այն միտքն է պարզում, որ Ֆրանսիան իւր յոյսը Գերմանիայի ներքին ցեղական երկպառակութեան և պատերազմի վրայ էր դրել, ուստի և այդ հիման վրայ էլ կազմած էր պատերազմական յանկարծակի յարձակման ծրագիրը։

Նաւատորմը պիտի գերմանական բանակի մի բաժինը պահէր հիւսիսում, իսկ յետոյ մտադրութիւն կար պաշարել Գերմանիայի մեծ ամրութիւնները. բայց նաւատորմը ոչ մի ծանր գործ չարաւ, իսկ բերդերը շրջապատելու համար պէտք էր զօրքը Էլզասում կենդրոնացնել, որ նոյնպէս չարին։

Արշաւանքի առաջին շրջանի գործողութեան նկարագրութիւններից ուշադրութեան արժանի է ներքին կապը Մեցի պատերազմի, Սեդանի վրայ արշաւելու և Սեդանի պատերազմի։ Մոլտկէն շարունակ մատնանիշ է անում այն հանգամանքը, որ ֆրանսիական զօրապետները փոխանակ զինուորական հաշիւներ տեսնելու, շարունակ ղեկավարվում էին քաղաքական հաշիւներով և գտնվում էին հասարակաց կարծիքի բռնէական ազդեցութեան տակ։

Հեղինակը հերքում է Բազէնի մասին ընդհանուր տարածուած կարծիքը. Մոլտկէն հաստատում է, որ Բազէն ամենևին դաւաճան չէր։

Գամբէտտայի եռանդը Մոլտկէն գնահատում է, բայց նկատում է նաև, որ Տուրից ղեկավարուած զինուորական գործողութիւններն անհմտութեան հետքերն էին կրում։

Մեծ հետաքրքրութեան արժանի է և Փարիզու պաշարման նկարագիրը, և նրա վիճակը յունուարի վերջը, երբ կառավարութիւնը նեղն էր ընկած անողոք հանգամանքների շնորհիւ։

—

Այս օրերս վախճանուեց տաճկաց զինուորական նախարար Ալի—Սաիբ փաշան։ Նրա փոխարէն նշանակուած է Պլեւնայի պաշտպան Ղազի—Օսման փաշան, որ պահում է իւր նախկին պալատական պաշտօնն էլ։

—

Լոնդոնի լրագրները հաղորդում են, որ տաճիկները իրենց Փոքր Ասիայում սահմանները դէպի Ռուսիա ամրացնում են։ Աշխատանքները մեծ եռանդով յառաջ են տարվում։ Բ. Դրան հրամանով նոր նոր բերդեր են կառուցանվում, որ պիտի տիրապետեն զանազան ճանապարհների վրայ, որոնք Հայաստանից Կ. Պոլիս են տանում։ Մի քանի լեռնային անցքերում ջրի այնպիսի մեծ աւազաններ են պատրաստվում, որոնք ահագին քանակութեամբ ջուր պիտի բովանդակեն։ Այդպիսի ջրամբարներից իւրաքանչիւրի շինութիւնը նստում է 1,000 անգլիական ֆունտ։

—

Սոֆիայից հաղորդում են «Նովոյէ Վրէմիա» լրագրին, որ այնտեղի թերթերն աշխատում են անգլիական, աւստրիական, իտալական, յունական և ռումինական հիւպատոսների իշխան Ֆերդինանդին արած այցելութիւններն այնպէս բացատրել, որ դրանով վերոյիշեալ տէրութիւնները ճանաչում են բուլղարական իշխանին երկրի օրինաւոր տէր։

ԶԱՆԱԶԱՆ

Բժշկի ընդունելութեան ժամերը՝

Հիւանդ. «Ո՞ր ժամին կարող եմ տեսնել բժշկին»։

Ծառայ. «4-ից մինչև 6-ը»։

Հիւանդ. «Լաւ ուրեմն, հէնց այդ ժամանակ կըգամ»։

Ծառայ. «Միայն թէ լաւ կանէք, պարոն, եթէ փոքր ինչ ուշ գայիք, որով հետև այդ ժամերին բժիշկը սովորաբար քնած է լինում»։

Սոֆիա քաղաքում (Բուլղարիա) ջրմուղ է շինվում և այդ նպատակով Անգլիայից ինժեներներ են հրաւիրուած։ Արդեօք հերթը երբ է Թիֆլիզին հասնելու։

Անգլիայում մի տեսակ Թափառող համալսարաններ են կազմակերպուած, որոնք քաղաքից քաղաք են անցնում։ Դասախօսութիւններ կարդալու համար հրաւիրվում են պրոֆեսօրներ զանազան քաղաքներից և արտասահմանից։ Դասախօսութիւնները մատչելի են ամենքին։ (Revue scientifique)

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

«Թուաբանական խնդիրներ և օրինակներ տարրական դասընթացք. մասն Առաջին—խնդիրներ և օրինակներ առաջին հարիւրեակի թուերով և ամենահասարակ կոտորակներով. փոխադրեց Գրիգորիս Երզնկեանց. Ա. և Բ. տարի, Թիֆլիզ. 1891 թ.» և վաճառվում է 30 կոպ.

ԱԶԴ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ կը հրաւիրուին այն հեղինակներն՝ որք ազգային գրութեան և պատմութեան վերաբերեալ որ և է աշխատութեամբ կը փափաքին մասնակցիլ Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել մինչև ներկայ տարւոյս դեկտեմբեր ամսոյ վերջն առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն, ի Կ. Պոլիս։

Տպագրեալ աշխատութիւնք պէտք է որ երեք օրինակ յուղարկուին. իսկ ձեռագիր մի օրինակ՝ որք ետ չեն դարձուիր։ 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ԿԱՐՆՈՅ ԳԱՂԹԸ
պատմական տեսութիւն
[illegible]
(Արտատպած «Արձագանք» շաբաթաթերթից)
ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԷԿ։

PARAITRA SOUS PEU
L'OPERETTE FRANÇAISE
EN
ASIE CENTRALE
Recit de voyage de la Première troupe française en Transcaspienne et dans le Turcestan.
PAR M. E. LASSALLE
PRIX 1 ROUBLE
On pourra se procurer ce livre aux librairies Centrale et Russe.

Բացուած է բաժանորդագրութիւն ազգային կարևորագոյն և ընտիր գրքուկի մը, որ անհրաժեշտ է ո՛ և է հայ մանկտւոյ և անհատի այս է

ԸՆՏԻՐ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ
ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐ. ՅԱՒԵԼԵԱԼ ԵՒ ՃՈԽԱՑԵԱԼ ԵՒ ԶԱՐԴԱՐԵԱԼ ԸՆՏԻՐ ՊԱՏԿԵՐՕՔ

Գրքոյկս կը բաղկանայ մօտ 16 մեծադիր թերթերէ. տպագրութիւնը նորաձոյլ տառերով և ընտիր թղթի վրայ է. 27 նոր, գեղեցիկ և նուրբ փորագրութեամբ պատկերներ՝ կը զարդարեն գրքուկիս էջերը, որք կը յիշեցնեն և կը զարթուցանեն հայ մանկտւոյ սրտից և երակաց մէջ ազգութեան ոգին և եռանդը, և կը յորդորեն զիրենք նմանիլ իրենց հարց։

Բաժանորդագրութեան գինն է 4 ֆրանք՝ կանխիկ վճարելի. տպուած թերթերն առանձին առանձին կ՚ուղարկուին իւրաքանչիւր Բաժանորդաց։ Այն անձինք՝ որք 12 օրինակէ աւելի կ՚առնուն մի անգամով, և կամ Դպրոցներ՝ որք կ՚ուզեն իրենց համար զանազան օրինակք՝ նոցա յատուկ և զգալի զեղչ կ՚շնորհուի։ Բաժանորդագրութեան գրուիլ ցանկացողք դիմեն հետևեալ հասցէիւ.

DIRECTION
DE L'IMPRIMERIE ARMÉNIENNE
VENISE. St. Lazare

Թիֆլիզի հայոց հրատարակչական ընկերութեան հրատարակութեամբ լոյս տեսան հետևեալ գրքոյկները.

1. Եօհաննա Սպիրի «Վարդ—Բէալին», գերմ. թարգ. Ի. Յ. գինն է 10 կոպէկ։
2. Կոմս Լ. Տոլստոյի «Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, բայց դատաստանը շուտ չի անում», թարգմ. Մ. Ա. գինն է 7 կոպէկ։
3. Դ. Վալդների «Հաւատարիմ Սավիտրին», հնդկական վէպ, գերմ. թարգմանեց Փ. Վարդանեան։ Գինն է 10 կոպէկ։

Վաճառվում են կենդրոնական գրավաճառանոցում։

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ
ԹԻՖԼԻԶ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Աւճալայի աղբիւրները ներկայումս միջին թւով օրական տալիս են 307,000 դոյլ ջուր, այն ինչ՝ ջրմուղի աբոնենտները ջուրն առանց որևէ տնտեսութեան գործածելով, մի օրուայ մէջ գործ ածած ջրի քանակութիւնը հասցնում են մինչև 420,000 դոյլի, այդ պատճառով ջրմուղի վարչութիւնը ստիպուած է աղբիւրի ջրին օրական մինչև 120,000 դոյլ գետի ջուր խառնել, որ ներկայումս վերին աստիճանի պղտոր է, ուստի և խիստ վնասում է ջրմուղի ջրի արժանաւորութեանը։

Որովհետև Թիֆլիզ քաղաքի բոլոր բնակիչները հաւասար չափով կարիք ունին լաւ ջրի մատակարարութեան, իսկ ջրի ներկայ դրութեան ժամանակ այդպիսի մատակարարութիւն հնարաւոր է մի միայն իրենց՝ բնակիչների օգնութեամբ, ուստի Քաղաքային Վարչութիւնս սրանով խոնարհաբար խնդրում է ջուրը կարելոյն չափ պակաս գործ ածել շռայլ նպատակների, շատրուանների, պարտէզներն ու բակերը ջրելու, կառքերը լուանալու և ուրիշ պէտքերի համար, նոյնպէս կարելի եղածին չափ տնտեսաբար վերաբերուել տնային պիտոյքների համար ջուր գործածելիս։

Քաղաքային Վարչութեանս ներկայ խնդիրքը կատարելով՝ կարելի է յուսալ, որ 307,000 դոյլ աղբիւրի ջուրը կատարելապէս կըբաւականանայ քաղաքի բնակիչներին և ջրմուղի վարչութիւնը ստիպուած չի լինիլ դիմելու ջրի մատակարարութեան կանոնով իւր տնօրինութեանը թողնուած արտակարգ միջոցների։

Վարչութիւնս կարևոր է համարում աւելացնել և այն որ այդ կանոնների զօրութեամբ, եթէ քաղաքի բնակիչներն անտարբեր վերաբերուեն ներկայ հրաւէրին, այն ժամանակ Վարչութիւնս ստիպուած կըլինի քաղաքն երկու մասի բաժանել և քաղաքի յիշեալ մասերին աղբիւրի ջուր մատակարարել երկու օրը մի անգամ։

Ընդ սմին, քաղաքի 1890 թւի դեկտեմբերի 28-ի որոշման զօրութեամբ, պ. քաղաքագլուխը կարգադրել է ժամանակաւորապէս հետևեալ 8 տեղերը բաց անել գետից ջուր վերցնելու համար. 1) Մուշտայիդի նոբաթողցի մօտից 2) Ֆիզիքական Օբսերվատորիայի մօտից, 3) Ղորղանեանի կղզուց, 4) Երկրորդ լաստատեղի մօտից, 5) Մադաթեան կղզու հիւսիսային անկիւնում ձախ ճիւղի կողմից, 6) Գոգիլոյի բաղնիքից ցած, 7) Վերա վտակի մօտ տակերի կանգնելու տեղում, 8) Երիւանսկայա հրապարակի մօտից։

1—1.

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են Նիկողայոս Տէր-Ղևոնդեանի հետևեալ հրատարակութիւնները՝

1.	ԱՂԱՅԵԱՆՑ՝	Ուսումն Մայրենի Լեզուի, ա. տարի նոր տիպ	25 կ.
2.	—	Ուսումն Մայրենի Լեզուի, բ. տ. . . .	40 կ.
3.	—	Ուսումն Մայրենի Լեզուի, գ. տ. . . .	55 կ.
4.	ԴԻՕՐԴԻԵԴԵԱՆ՝	փոփոխածու թուաբ. խնդիր.-ամբողջ թուեր	40 կ.
5.	—	փոփոխածու թուաբ. խնդիր.-կոտորակ թ.	50 կ.
		Այս ձեռնարկը հրատարակվում է երկրորդ անգամ, նորինորոյ խմբագրած և բազմաթիւ օրինակներով ու խնդիրներով ճոխացրած և առաջին մասի հետ միասին կազմում է ազգային ուսումնարանների չորրորդ և հինգերորդ տարիների դասընթացքը։	
6.	ԹՈՒՄԱՆԵԱՆՑ՝	Начальная книга Русс. языка. . .	25 կ.
7.	ՄԱՆԴԻՆԵԱՆՑ՝	Ընտանեկան Աշխարհ, ա. տ. . . ,	25 կ.
8.	—	Գիւղագնական Աշխարհ, բ. տ.	30 կ.
		Այս երկու գրքերի զեղչը ուսումնարաններին և գրավաճառներին երեսուն է (30%)։	
9.	—	Նահապետական Աշխարհ, նոր տիպ . .	60 կ.
		Նախընթաց տպագրութիւնների գինը 65 կ. էր։	
10.	—	Հենչէլի բանաւոր և գրաւոր հաշուելու խընդիրներ, առաջին և երկրորդ տարուայ դասընթացք	40 կ.
11.	—	Նոյնը—երրորդ տարուայ դասընթացք .	50 կ.
12.	ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՑ՝	Մայրենի Լեզու, ա. տ. նոր 14-դ տ.	35 կ.
13.	—	Մայրենի Լեզու, երկրորդ տարի . .	40 կ.
14.	—	Մայրենի Լեզու, երրորդ տ. վեց. տիպ.	50 կ.
15.	—	Մայրենի Լեզու, չորրորդ տ. վեց. տիպ	65 կ.
16.	—	Մայր. Լեզուի ա. տարուայ բացատրութիւնը ուսուցիչ. համար, ձրի է տրվում	» »
17.	—	Հայորդի՝ Սրբազան Պատմութիւն Հինկտակարանի.	50 կ.
18.	—	Սրբազան Պատմութիւն Նոր-Կտակար.	50 կ.
19.	—	Մայր. Լեզուի Քերակ. Տարերքը մ. ա.	30 կ.
20.	—	Նոյն—մասն երկր. Նոր տպագրութ.	40 կ.
		Վերջին չորս գրքերի զեղչն է 30%	
		Մնացած գրքերի զեղչը, գրավաճ. սեպհական հրատարակութեանց պէս, 20% է։	

(2—1)

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“
(ВѢНСКІЙ МАГАЗИНЪ)
ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ
(Գոլովինսկի պրօսպեկտ, Առաջին իմնազիայի հանդէպ, Մդիվանիի տանը)

Ստացուած է ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ՝ մարդկանց և երեխաների աշնանային և ձմերային պատրաստի հագուստներ, ամենավերջին ձևի։ Պատրաստուած են Մոսկուայում, աւելի տնտեսաբար, մեր անմիջական հսկողութեան տակ՝ սեպհական արհեստանոցում և որպէս առաջին ձեռի արտադրութիւն, գները՝ համեմատաբար աւելի աժան են և ամենքին մատչելի։

(25—1) Խուդավերդեան

Дозволено цензурою. Тифлисъ, 24 августа 1891 года. Տպարան Յ. Մարտիրոսեանցի։ Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул д. № 1—2